



ՀՀ – ԵՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄ

«Պարենի անվտանգությունը ՀՀ-ում տնտեսական զարգացման, սոցիալական պայմանների բարելավման, ԵՄ հետ ինտեգրման խորացման, ինչպես նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության համատեքստում»

Խորհրդատվական կարծիք
(հետազոտական զեկույց)
Հեղինակ՝ Կարեն Մխիթարյան

Ներածություն

Մեր մոլորակի վրա արդեն ապրում է 7 մլր մարդ: Այս ցուցանիշը 2050 թ.-ին կհասնի 9 մլր-ի: Այսօր արդեն մոտ 800 մլն մարդ չունի բավարար սնունդ: Մարդիկ սննդի հայթայթման կամ աճեցնելու համար ամբողջովին կախում ունեն Երկրի բնական պաշարներից: Կլիմայի փոփոխությունն առաջ է բերում նոր խնդիրներ, թեև մենք արդեն պայքարում ենք գնալով աճող բնակչությանը սննդով ապահովելու համար: Տեղումների բնույթի փոփոխությունը և անկանխատեսելիությունը, երաշտը, բարձր ջերմաստիճանները, ծայրահեղ եղանակային իրադարձությունների քանակի և ինտենսիվության աճը, վնասատուների և հիվանդությունների բռնկումները հանգեցնում են բերքի և անասունների գլխաքանակի կորստի: Սպառողների կատարած գնումները նույնպես կարող են ազդել շրջակա միջավայրի վրա: Ահա թե ինչու է կարևոր ազգաբնակչությանը պարենով կայուն ապահովման խնդիրը հատկապես կլիմայի փոփոխությանը հարմարվողականության համատեքստում:

ՀՀ-ում պարենի անվտանգության բնագավառում ներկայումս առկա են համապատասխան օրենքը և ռազմավարությունը, ինչպես նաև տարբեր վերլուծություններ, սակայն այդ բնագավառը հանդիսանում է համաշխարհային մակարդակով ուշադրության առարկա: Կլիմայի փոփոխության համատեքստում, տնտեսությունների փոփոխությունների արդյունքում և դրանով պայմանավորված,՝ պարենի անվտանգությունը տնտեսական զարգացման, տարածաշրջանային ինտեգրման և կլիմայի

փոփոխության հարմարվողականության տեսանկյունից արժանի է ուսումնասիրության:

Հեղափոխության նպատակն է բացահայտել ՀՀ պարենային անվտանգության ապահովման առաջնահերթությունը, գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության և մրցունակության մակարդակը, ինչպես նաև հիմնական բաղադրիչների իրավիճակը և գնահատել կլիմայի փոփոխության հարմարվողականության տեսանկյունից իրականացվող պետական միջոցառումների արդյունավետությունը: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրելու ներկա օրենսդրական դաշտը և այլ նորմերի առկայությունը, ինչպես նաև պարենային անվտանգության նոր ռազմավարության հիմնական ուղղությունները, առկա պետական միջոցառումների պլանը և գնահատել դրանց արդյունավետությունը կայուն զարգացման նպատակների և CEPA համաձայնագրի համապատասխան հոդվածների պահանջների ներքո: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջացել ներկայացնելու առկա անհամաձայնությունները CEPA-ի, ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ՀՀ օրենսդրության միջև և իրականացվող գործառույթների շրջանակում: Մեր նպատակն է նաև գնահատել մասնավոր հատվածի դերակատարությունը պարենի անվտանգության ապահովման տեսանկյունից, կլիմայի փոփոխության հարմարվողականության համատեքստում, բացահայտել պարենային անվտանգության ապահովման դժվարությունների պատճառները: Մեր ուսումնասիրությունը կարող է դիտարկվել որպես Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության, մասնավորապես, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության առումով դրա պատշաճ մակարդակի պահպանման հնարավորությունների համատեքստում գործադիր իշխանությանն աջակցություն, իսկ դրա ակնկալվող արդյունքը կարող է տեսական հիմք ծառայել որոշումներ կայացնողների համար: Հետևաբար, սննդի պակասը և արտաքին մատակարարումներից աճող կախվածությունը կարող են համարվել էական ռիսկեր տնտեսական և մարդկային անվտանգության համար: Ընդհանուր առմամբ, պարենային անվտանգությունը նպատակահարմար է դիտարկել տարբեր հարթություններից.

- միջազգային չափանիշների և չափորոշիչների հիման վրա պարենային անվտանգության ակադեմիական և փորձագիտական գնահատում,
- պարենային անվտանգության գնահատում՝ հիմնված տվյալ շուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության վրա, սպասարկող բիզնես նախագծեր,

- կառավարության քաղաքականությունը բնակչությանը բավարար քանակությամբ սնունդ պահելու համար,
- համաշխարհային շուկաներում պարենային անվտանգության վիճակը՝ որպես ՄԱԿ-ի Պարենի ծրագրի և այլ միջազգային կառույցների համար կարևոր խնդիր՝ վերացնելու սովն ու թերսնումը՝ ի թիվս այլ կայուն զարգացման նպատակների:

Մեթոդաբանությունը

Հայաստանում պարենային անվտանգության վիճակը ուսումնասիրելու համար մենք ընտրել ենք մի քանի մեթոդներ.

- վիճակագրական տվյալների հավաքագրում և տնտեսական ցուցանիշների վերլուծություն.
- օրենսդրական դաշտի վերլուծություն,
- գյուղատնտեսության, մասնավորապես ագրարային քաղաքականության ոլորտում պետական միջոցառումների արդյունավետության գնահատում,
- վիճակագրական շարքերի ուսումնասիրություն՝ երկրում պարենային անվտանգության պահպանման դինամիկան դիտարկելու համար,
- տեղական շուկայում ուժեղ, թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների հիման վրա վերլուծության իրականացում,
- հարցազրույցներ և հարցումներ՝ պարենային անվտանգության ներկա վիճակը գնահատելու և ընդհանուր միտումները բացահայտելու նպատակով,
- պարենային անվտանգության ոլորտում համապատասխան տվյալների գնահատման համեմատական վերլուծության մեթոդ,
- տնտեսական վերլուծության վրա հիմնված ընդհանրացումների և եզրակացությունների մեթոդ:

Առկա խնդիրների նկարագիրը

Պարենային անվտանգության ներկա վիճակը և խնդիրները կլիմայի փոփոխության հարմարվողականության համատեքստում

Պարենային անվտանգության հիմնախնդիրներին անդրադառնալիս կարևոր է հաշվի առնել գլոբալ բնույթ կրող համավարակները, կլիմայի փոփոխությամբ պայմանավորված բնական աղետները, հողագործության ոլորտի և այլ բազմաբնույթ մարտահրավերները: Փորձագետների վկայությամբ, մեր երկիրն այս առումով կրում է ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային ռիսկերի ու սպառնալիքների ազդեցությունը, հետևաբար կարևոր է, նախ իրատեսորեն գնահատել դրանց ազդեցությունները, ապա նաև համակարգված քայլեր իրականացնել պարենային անվտանգության ապահովման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) համաշխարհային

պարենային անվտանգության հարցերով հանձնաժողովը պարենային անվտանգությունը սահմանում է հետևյալ կերպ. «Բոլոր մարդիկ մշտապես ապահովված են բավարար, անվտանգ ու սննդարար պարենի ֆիզիկական, սոցիալական և տնտեսական հասանելիությամբ, որը բավարարում է նրանց սննդային նախապատվություններն ու անհրաժեշտ սննդակարգը՝ ակտիվ և առողջ կյանք վարելու համար»¹:

Առաջին անհրաժեշտության առավել պահանջարկված սննդամթերքի գծով ինքնաբավությունը, որպես կանոն, երկրի պարենային անվտանգության մակարդակը գնահատող կարևոր ցուցանիշներից է: Ըստ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների» (ապրանքներ, որոնք սպառողները ամենայն հավանականությամբ կգնեն անկախ եկամտի մակարդակից) ինքնաբավության մակարդակը Հայաստանում կազմում է 52,5%: Ինքնաբավության մակարդակը բարձր է եղել առաջին անհրաժեշտության այնպիսի ապրանքների դեպքում, ինչպիսին է ձուկը (128,3%), բանջարեղենը (101,5%), միրգը և հատապտուղը (100,5%), ձուն (99,9%), կարտոֆիլը (99,2%): Մի շարք ապրանքների գծով Հայաստանը մասամբ է ինքնաբավ, ինչը նշանակում է, որ տեղական արտադրանքը ծածկում է ներքին պահանջարկի մի մասը միայն, ինչպես օրինակ տավարի միսը (95,9%), կաթը (86,2%), խոզի միսը (74,1%): Ինչ վերաբերում է առաջին անհրաժեշտության պարենային մյուս ապրանքներին, Հայաստանն ինքնաբավ չէ և մեծապես կախված է ներմուծումից: Հատկապես նդեղենը (50%), ցորենը (30,7%), թռչնամիսը (28,6%) և բուսական յուղը (1,4%) այս դասին են պատկանում²:

Էկոնոմիկայի նախարարության կարծիքով՝ ինքնաբավության ավելի բարձր մակարդակի կարելի է հասնել մշակվող հողատարածքներն ավելացնելով, նաև բարելավելով բերքատվությունն ու մշակաբույսերի որակը: Գյուղատնտեսական արտադրանքի որակի բարելավմանն ու մշակաբույսերի բերքատվության բարձրացմանն ուղղված ջանքերն արտադրական ամբողջ գործընթացն ավելի շահութաբեր և գրավիչ են դարձնում գյուղացիական տնտեսությունների համար: Ինչ վերաբերում է 2020 թվականի քաղաժ դասերին, թե՛ պետպաշտոնյաներին, թե՛ արտադրողներին ստիպել է դուրս գալ հարմարավետության գոտուց և այլընտրանքային լուծումներ գտնել: Այսպես օրինակ, երբ ԲՈՎԻԴ-19

¹ «Պարենային անվտանգություն» եզրույթն առաջին անգամ շրջանառվել է 1974 թվականին, Պարենի համաշխարհային համաժողովի ընթացքում. ընկալման առանցքում սննդի առկայությունն ու գների կայունությունն էր: Հաջորդող տասնամյակներին հասկացությունը զարգացում է ապրում ու փոխվում՝ արձագանքելով փոփոխվող աշխարհակարգին ու արտացոլելով հասկացության բազմաթիվ շերտերը: Այսօր արդեն պարենային անվտանգությունն ընդգրկում է չորս հիմնական բաղադրիչ՝ պարենի առկայություն, մատչելիություն, օգտագործում և կայունություն:

² www.mineconomy.am

համավարակը նոր էր սկսել տարածվել Հայաստանում, փակվեց ցամաքային սահմանը հարևան Վրաստանի և Իրանի հետ (Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանները փակ են դեռ 1990-ականներից): Իրավիճակին արագ արձագանքը, սակայն, Հայաստանին թույլ տվեց խուսափել բեռնափոխադրումների հետ կապված հետագա խնդիրներից³: Իրականում, անցյալում որևէ ժամանակ ագրոպարենային համակարգերը դեռ այսքան աղետների չեն առերեսվել, ինչ վերջին տարիներին. վտանգված է սննդի ամբողջ համակարգը: Աղետները դուրս են գալիս տնտեսական տիրույթից և կորստաբեր հետևանքներ ունենում պարենային անվտանգության և սնուցման վրա: Հատկանշական է, որ ոչ մի երկիր՝ հարուստ, թե աղքատ, մեծ, թե փոքր, չի կարող խուսափել ԿՓ-ի անդառնալի հետևանքներից: Ինչպես տիկին Ղափլանյանը նշեց իր խոսքում, վտանգված է մեր բոլորի անվտանգությունը, պարենային անվտանգությունը և մեր հաջորդող սերունդների կայուն ապագան:

Փորձագիտական հատվածի դերը և մասնակցությունը պարենային անվտանգության ապահովմանը միտված որոշումների կայացման գործընթացում

Մեր կողմից ուսումնասիրվել և հաշվի են առնվել կլիմայի նկատմամբ տնտեսության հարմարվողականության, արդյունավետ ագրարային քաղաքականության ու գործելակերպերի միջազգային փորձը, ինչպես նաև բույսերի մշակության և անասնապահության տեսանկյունից Հայաստանում առկա կլիմայի փոփոխության ռիսկերը, խոցելիությունը, ինստիտուցիոնալ բացերը և դրանց բարելավման ուղղությամբ փորձագիտական հանրության մշակած առաջարկները: Մասնավորապես, Հայաստանում հիշյալ հիմնահարցերին պարբերաբար անդրադառնում են «Էկոլուր» հասարակական կազմակերպությունը, «Այլընտրանք» հետազոտական կենտրոնը, Հայաստանի գործատուների հանրապետական միությունը, «Քարդ ագրոսերվիսը», «Օքսֆամը», «Ֆերմերային շարժում» հասարակական կազմակերպությունը և այլ կառույցներ: Բացի այդ, փորձագիտական հատվածի դիրքորոշումն ու գնահատականները հաշվի առնելու նպատակով իրականացրել ենք հարցախույզ և հարցազրույցներ՝ ոլորտի առավել աչքի ընկնող ներակայացուցիչների հետ: Մասնավորապես, մեր աշխատանքներում հաշվի են առնվել բիզնես ասոցիացիաների, բազմաթիվ գործատուների և համանուն հանրապետական միության, վերլուծական կենտրոնների, կրթական հաստատություններից ԵՊՀ-ի, Եվրոպական համալսարանի,

³ <https://evnreport.com/arm/magazine-issues/armenias-food-security/>

ինչպես նաև գործատուների հետ հարցազրույցների արդյունքները, որոնք ներկայացված են սույն հետազոտության Հավելված 1-ում:

Մասնավորապես, կա տեսակետ առ այն, որ կլիմայի փոփոխությունը կարող է քառասուն տարով հետաձգել սովի դեմ պայքարը, իսկ մեր գլոբալ պարենային համակարգը ցավալիորեն անպատրաստ է հաղթահարելու այդ մարտահրավերը⁴: Առավել հիշարժան է կլիմայի փոփոխությունների վերաբերյալ փորձագետների համապարփակ հաշվետվությունը, համաձայն որի կլիմայի փոփոխությունը պարենային անվտանգության վրա ունենալու է սպասվածից ավելի լուրջ ազդեցություն և դա տեղի է ունենալու շատ ավելի վաղ քան ակնկալվում էր: Այսպես օրինակ, «Բարձրացող ջերմաստիճան և ահագնացող սով. ինչպես կանգնեցնել սովի դեմ պայքարը վտանգող կլիմայի փոփոխությունները» տեղեկագրում նշվում է տասը հիմնական գործոններ, որոնք բացասական ազդեցություն են ունենալու բարձրացող ջերմաստիճանի պայմաններում երկրի բնակչությանը բավարար սնունդով ապահովելու վրա: Որոշ գնահատումներով, հացահատիկների համաշխարհային գները կարող են կրկնապատկվել մինչև 2030 թվականը և այդ գնաճի կեսը պայմանավորված կլինի կլիմայի փոփոխությամբ: Ջերմաստիճանի ընդամենը 1.5 աստիճանով աճը լուրջ հետևանքներ կարող է ունենալ աշխարհի պարենային համակարգի վրա, իսկ ջերմաստիճանի բարձրացման 3-4 աստիճանի շեղումը հատելուց հետո մարդկությունը կկանգի պարենի անկառավարելի ճգնաժամի առաջ⁵:

Տասը բացերը կամ «ձախողված» քաղաքականության ոլորտները, որոնք սպառնալիք են երկրների ինքնակերակրման ունակության համար՝ հետևյալն են.

1. Պարենի պաշարներ. Եթե հացահատիկ արտադրող հիմնական երկրներում ծայրահեղ վատ եղանակային պայմանների պատճառով ոչնչանա բերքը, ապա սննդամթերքի գները կտրուկ կբարձրանան, պատճառ դառնալով պարենային ճգնաժամերի:
2. Գյուղատնտեսական ներդրումներ. Զարգացող երկրներում պետությունը չնչին գումարներ է ներդնում գյուղատնտեսության զարգացման համար: Ուսումնասիրված 20 աֆրիկական երկրներից միայն չորսն են կատարել իրենց հանձնառությունը գյուղատնտեսության վրա ծախսել պետական բյուջեի 10 տոկոսը: Իսկ Հայաստանում պետական բյուջեից գյուղատնտեսությանն ուղղված ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 0,3% (2014-ին նախատեսվում է՝ 0,5%-ը), իսկ ընդամենը պետական ծախսերի 1,90%-ը /2014 –ն նախատեսվում է՝ 1,91%-ը/

⁴ <https://www.1in.am/260370.html>

⁵ <https://www.1in.am/260370.html>

3. Գյուղատնտեսական ապահովագրում. Աղքատ երկրներում ֆերմերների ընդամենը 1 տոկոսի բերքն է ապահովագրված, որի հետևանքով մեծապես դժվարանում է կենսաապահովումը, երբ կլիմայի հարվածներից ոչնչանում է բերքը:

4. Հարմարվելու համար նախատեսված միջազգային ֆինանսավորում. հարուստ երկրները խոստացել են օգնել աղքատ երկրներին հարմարվելու կլիմայի փոփոխություններին, սակայն տրամադրել են անհրաժեշտ գումարի ընդամենը 2 տոկոսը:

5. Ցանկատարածքների ոչ բավարար ոռոգում. Աղքատ երկրների մեծ մասում ոռոգվում է ցանկատարածքների ընդամենը մեկ տոկոսը:

6. Գյուղատնտեսության ոլորտի հետազոտություններ և զարգացում (ՀևԶ). Ողջ աշխարհի մակարդակով՝ վերջին 100 տարիների ընթացքում սերմնատեսակների բազմազանությունը նվազել է շուրջ 75 տոկոսով: Դա բացասականորեն է անդրադարձել փոփոխվող կլիմայական պայմաններին առավել համապատասխան սերմնատեսակներ ունենալու հնարավորության վրա: Աղքատ երկրներում գյուղատնտեսության ՀևԶ-ի վրա ծախսվող գումարը կազմում է հարուստ երկրներում այդ նպատակներով ծախսվող գումարի ընդամենը մեկ վեցերորդ մասը:

7. Սոցիալական պաշտպանություն. Աշխարհի բնակչության ընդամենը 20 տոկոսն է օգտվում սոցիալական պաշտպանության համապատասխան ծրագրերից:

8. Եղանակի ճշգրիտ կանխատեսում. հիդրոմետ ծառայությունների օդերևութաբանական կանխատեսումները օգնում են ֆերմերներին խուսափել բերքը կորցնելուց: Աղքատ երկրներում դրանք խիստ սակավ են, տրամադրվող տեղեկատվությունը ոչ ճիշտ:

9. Գենդերային խտրականություն. Զարգացող երկրներում կանայք կազմում են գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատուժի 43 տոկոսը, սակայն խտրականության պատճառով դժվարանում է նրանց հարմարվողականությունը փոփոխվող պայմաններին: Օրինակ, կանայք հազվադեպ են հանդիսանում իրենց կողմից մշակվող հողակտորի սեփականատեր, ուստի չեն կարող փոխել ֆերմերության մեթոդները, որպեսզի հարմարվեն կլիմայի փոփոխությանը:

10. Մարդասիրական օգնություն. Կլիմայի փոփոխության հետևանքով կարող են լինել պարենային ճգնաժամեր, սակայն այժմ էլ մարդասիրական օգնությունը չի կարողանում ապահովել պարենի անընդհատ աճող պահանջարկը:

Մյուս կողմից, ՄԱԿ-ի Համաշխարհային կլիմայի փոփոխությունների հարցերով զբաղվող միջկառավարական հանձնախումբը /IIPC/ մարտի 31-ին հրատարակված «Խոցելիությունն ու հարմարվողականությունը» կլիմայի ազդեցության գնահատման հինգերորդ հաշվետվությամբ

նախազգուշացնում է, որ կլիմայի փոփոխությունը յուրաքանչյուր տասնամյակ համաշխարհային մակարդակում շուրջ 2 տոկոսով նվազեցնելու է գյուղատնտեսական արտադրանքը, մինչդեռ պարենի պահանջարկն այդ նույն կտրվածքով աճելու է 14 տոկոսով: «Կլիմայի փոփոխությունը՝ քաղցի դեմ տարվող պայքարում ամենամեծ մարտահրավերն է, իսկ աշխարհը ցավալիորեն անպատրաստ է դրան: Ակնհայտորեն, կլիմայի փոփոխությանը հարմարվելու համար պահանջվող գումարը բնավ չի սնանկացնի աշխարհը: Դրա համար աղքատ երկներին անհրաժեշտ է շուրջ 100 միլիարդ դոլար տարեկան, ինչը համարժեք է աշխարհի 100 ամենահարուստ մարդկանց կողմից տնօրինվող հարստության ընդամենը հինգ տոկոսին: Ինչպես ՄԱԿ-ի տարբեր կառույցներն, այնպես էլ առանձին հասարակական կազմակերպություններ կոչ են անում պետություններին և բիզնեսներին գործել հիմա, որպեսզի կանգնեցվի մարդկանց սովի մատնող կլիմայի փոփոխությունը՝ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված գյուղատնտեսական աղետների ռիսկերի նվազեցման ադապտացիոն տեխնոլոգիաների ներդրման, համայնքների դիմադրողականության բարձրացման, գյուղատնտեսական ապահովագրման ներդրման, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների կտրուկ նվազեցման և սովի ու կլիմայի խնդիրներին հետամուտ միջազգային համաձայնագրերի միջոցով⁶: Այս առումով կենսական կարևորություն է ներկայացնում Հայաստանում առկա ռեսուրսների գնահատականը և դրանց օգտագործման արդյունավետության ու ռիսկերի խնդրի ուսումնասիրությունը:

Կլիմայի փոփոխության համապետություն ՀՀ գյուղատնտեսության ոլորտի խոցելիությունն ու հարմարվողականության հնարավորությունները «Հարմարվողականության ազգային ծրագիր Հայաստանում» (ՀԱԾ) ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի շրջանակում «Քարդ ագրոսերվիս» կազմակերպության կողմից իրականացված «Կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսության ոլորտում իրավական, ինստիտուցիոնալ խոցելիության գնահատման և հարմարվողականության պլանավորման բացերի ու խոչընդոտների բացահայտում և վերլուծում» ուսումնասիրության արդյունքները վկայում են երկրի կայուն տնտեսական զարգացման և կլիմայի փոփոխության մարտահրավերների նկատմամբ դիմադրողականության ապահովման գործընթացում գյուղատնտեսության ոլորտում հարմարվողականության միջոցառումների իրականացման կարևորության մասին:

⁶ Նույն տեղում


Այն փաստը, որ գյուղատնտեսությունն ամբողջ աշխարհում կլիմայի փոփոխության նկատմամբ ամենախոցելի ոլորտներից է, ակնհայտ է: Կլիմայական փոփոխությունների ազդեցություններն այս ոլորտում բազմաթիվ են: Ջերմաստիճանի և տեղումների քանակի փոփոխությունները, ինչպես նաև եղանակային վտանգավոր երևույթները մեծ ազդեցություն ունեն բերքատվության, անասնապահության արդյունավետության վրա, անհրաժեշտ ոռոգման ջրի քանակի, գյուղատնտեսական տարաբնույթ գործընթացների վրա, ներառյալ՝ բերքի տեղափոխումն ու պահեստավորումը: Ընդհանուր առմամբ, կլիմայի փոփոխությունն ազդում է գյուղատնտեսության ոլորտի արժեքի ստեղծման և մատակարարման շղթաների յուրաքանչյուր օղակի վրա⁷: Հատկապես կարևորվում են ՀԱԾ ծրագրի և դրա շրջանակներում իրականացվող ուսումնասիրություններում մատնանշվող ուղենիշները կլիմայի փոփոխության մարտահրավերներին դիմակայելու և հարմարվելու գործընթացում:

Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության և դրա մարտահրավերների մեծ մասն առնչվում են պարենային անվտանգությանը, այսպիսով կլիմայական փոփոխությանն առնչվող կարևոր հարցերը հանրության համար առավել շոշափելի և ընկալելի դարձնելու համար: Մեր առջև ծառայած են շատ լուրջ խնդիրներ, հատկապես Հայաստանի պարագայում, որտեղ գյուղատնտեսությունը դիտարկվում է որպես թիրախային և շատ մեծ պոտենցիալ ունեցող տնտեսական ոլորտ: Այստեղ մենք շատ անելիք կան՝ հասկանալու, թե ինչպես ենք արդյունավետ կերպով, թե՛ շրջակա միջավայրի տեսանկյունից, թե՛ տնտեսության զարգացման տեսանկյունից, հարմարվում կլիմայի փոփոխությանը: Հայաստանն արդեն արձանագրել է ջերմաստիճանի 1.3 աստիճանի բարձրացում և դրան զուգահեռ կա տեղումների արձանագրված 9 տոկոս նվազեցում: Այսինքն, Հայաստանն այսօր արդեն իսկ գտնվում է կլիմայական փոփոխության ճգնաժամի առջև:

Դիտարկվող խնդիրների առումով արժեքավոր են ոչ միայն ամբողջական կառույցների, այլ նաև առանձին փորձագետների կատարած ուսումնասիրությունները: Այսպես օրինակ, Ա. Գյուլզադյանի կողմից մանրակրկիտ ուսումնասիրվել է հատկապես հիդրոոդերևութաբանական

⁷ <https://nature-ic.am/hy/news/Climate-change-vulnerabilities-and-adaptation-opportunities-in-RA-agriculture-sector-were-discussed-in-the-frame-of-UNDP-GCF-NAP-project/11687>

վտանգավոր երևույթների նկատմամբ խոցելիությունը ըստ ՀՀ մարզերի⁸:



Ինչ վերաբերվում է Հայաստանում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկերին, ապա դրանցից կարևորվում են հետևյալները.

Հիդրոդերևութաբանական վտանգավոր երևույթների հաճախականության, ինտենսիվության և տևողության աճ
Ջրային ռեսուրսների քանակի նվազում

Անտառային և կանաչ տարածքների կրճատում

Էկոհամակարգերի հավասարակշռության խախտում

Պարենային անվտանգության ապահովման խնդիրներ

Անտառային հրդեհների աճ

Կլիմայի փոփոխության հետևանքները գյուղատնտեսությունում

Սաստիկ շոգը՝

առաջացնում է ընտանի կենդանիների ջերմային սթրեսի ավելացում, որը

կարող է հանգեցնել մթերատվության անկման,

հանգեցնում է հողի ջերմաստիճանի բարձրացման, ինչի արդյունքում

հնարավոր է կարևոր միկրոօրգանիզմների, սնկերի և բակտերիաների

վերացում, ինչը բացասական ազդեցություն կունենա հողի բերրիության

վրա,

նպաստում է անապատացմանը, կենսաբազմազանության կրճատմանը և,

որոշ դեպքերում, վերացմանը:

Ո՛վքեր են ավելի խոցելի

⁸ <https://theanalyticon.com/hunis-2022/%d5%af%d5%ac%d5%ab%d5%b4%d5%a1%d5%b5%d5%ab-%d6%83%d5%b8%d6%83%d5%b8%d5%ad%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a8-%d6%87-%d5%a4%d6%80%d5%a1-%d5%a1%d5%a6%d5%a4%d5%a5%d6%81%d5%b8%d6%82%d5%a9/>

Այն երկրները, որոնց հիմնական եկամուտները կախված են կլիմայազգային ոլորտներից՝ գյուղատնտեսություն, անտառատնտեսություն, ձկնաբուծություն և այլն:
Ջերմաստիճանի և տեղումների առումով խիստ զգային և խոցելի տարածքների բնակիչները, որտեղ հաճախակի կրկնվում են երաշտները, հեղեղումները, փոթորիկները և այլն:
Ցածրադիր առափնյա և բարձր լեռնային բնակավայրերի բնակչությունը: Երկրները, որոնք ունեն պարենի, էներգակիրների սղություն և չունեն համապատասխան ենթակառուցվածքներ:
Երկրները, որոնք ունեն կլիմայի փոփոխության հարմարվողականության (ԿՓՀ) ցածր մակարդակ:

Հայաստանում առավել խոցելի են հետևյալ ոլորտները.

Ջրային ռեսուրսներ – ջրի սակավություն
Գյուղատնտեսություն – հողի դեգրադացիա և անապատացում, բերքատվության անկում
Առողջապահություն – ջերմային ալիքների ավելացում, վարակիչ հիվանդությունների տարածում,
Բնական էկոհամակարգեր – կենսաբազմազանության կրճատում, անտառածածկ տարածքների կրճատում
Բնակավայրեր – ենթակառուցվածքների վնասում
Զբոսաշրջություն – տուրիստական սեզոնների փոփոխություն, ձմեռային զբոսաշրջության վերացում:

Կլիմայի փոփոխության մեղմացում
Էներգիայի այլընտրանքային աղբյուրները.

Արևի
Կենսազանգվածից ստացվող էներգիա
Երկրաջերմային
Քամու

Հիդրոէլեկտրաէներգիա (էներգետիկ ծախսի կրճատման համար միջոցառումների կիրառում, էներգիայի օգտագործման սովորությունների, վարքի և ռեժիմների փոփոխություն և այլն)

Էներգաարդյունավետություն (էներգետիկ ծախսի կրճատում միայն էներգիայի օգտագործման արդյունավետության բարձրացման հաշվին՝ ժամանակակից տեխնոլոգիաներ և էներգասպառող սարքավորումների կանոնավոր սպասարկում)

Կլիմայի փոփոխության մեղմացման միջոցառումներ

Կայուն հողօգտագործում ու անտառկառավարում,

Անտառապատ տարածքների պահպանում

Կլիմայի փոփոխության հարմարվողականություն, հիմնական մոտեցումներ

Կորուստների կանխում ու կրճատում,
Անցանկալի ազդեցությունների թուլացում,
Գործելակերպի փոփոխություն,
Գործունեության տարածքի փոփոխություն,
Իրազեկության մակարդակի բարձրացում,
Մշակութային և վարքագծային փոփոխություններ, և այլն:
Առանձնացնում են հարմարվողականության հետևյալ տեսակները.
Կանխարգելիչ հարմարվողականություն
Ինքնավար հարմարվողականություն
Արձագանքող (պատասխանող) հարմարվողականություն
Պլանավորված հարմարվողականություն
Կլիմայի փոփոխության հարմարվողականություն. Տեսակներ
Միջոցները ձեռնարկվում են նախքան կլիմայի փոփոխության
բացասական հետևանքների դրսևորումը: Օրինակ, չորադիմացկուն
սորտերի անցումը՝ սպասվող ջերմաստիճանի աճին և կանխատեսվող
երկարատև երաշտներին դիմակայելու համար:
Կլիմայական ազդեցություններին ոչ գիտակցված պատասխան՝
պայմանավորված էկոհամակարգերում կամ շուկաներում առաջացող
բնական փոփոխություններով: Օրինակ, բնական համակարգերը ԿՓ
ազդեցություններին արձագանքում են ավտոմատ՝ հակազդելով
փոփոխված պայմանների հետևանքով առաջացած սթրեսներին:
Միջոցառումներն իրականացվում են կլիմայի փոփոխության
ազդեցության բացասական հետևանքների ի հայտ գալուց հետո: Օրինակ,
ֆերմերն անցնում է կաթիլային ոռոգման, քանի որ տեղումների նվազող
քանակի պատճառով ոռոգման ջրի քանակն այլևս չի բավարարում:
Կլիմայական փոփոխության բացասական ազդեցությունների
գիտակցման և ցանկալի վիճակին վերադառնալու համար որոշակի
գործողությունների ձեռնարկում, օրինակ՝ քաղաքաշինության նորմերում և
կանոններում փոփոխությունները կլիմայական ռիսկերի նկատմամբ
բնակավայրերն ավելի դիմացկուն դարձնելը:
Կլիմայի փոփոխության հարմարվողականություն.
Գյուղատնտեսություն
Ջրօգտագործման արդյունավետ լուծումներ
Ջերմակայուն և չորադիմացկուն մշակաբույսերի աճեցում
Հակակարկտային ցանցեր
Դաշտապաշտպան անտառաշերտեր
Ջերմոցային և ջերմատնային տնտեսություն
Ջրային տնտեսություն
Ջրամատակարարման համակարգերի բարեկարգում
Ջրօգտագործման պլանավորում և ջրային ռեսուրսների ամբարում

Ջրօգտագործման կարգավորում
Ջրավազանների կառավարում և պահպանում
Բնակավայրերի զարգացում և անվտանգություն
Սելավատարերի կառուցում և պատշաճ շահագործում
Գետերի և ջրավազանների ափերի ամրացում
Խորարմատ ծառերի տնկում և ջրահեռացման համակարգեր
Կանաչ տարածքների ավելացում
Վաղ ազդարարման արդյունավետ համակարգեր
Մարդու առողջություն
Կանաչ տարածքների ավելացում
Արևապաշտպան միջոցների կիրառում
Հանրային իրազեկումը և անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ
Բնական էկոհամակարգեր
Անտառապահպանություն և անտառապատում
Բնական պաշարների կայուն օգտագործում
Կենսաբազմազանության պահպանում
Էներգետիկա
Շենքերի արդյունավետ ջերմամեկուսացում
Էներգիայի արտադրության ռիսկերի և խոցելիության գնահատում
Զբոսաշրջություն
Ծառայությունների դիվերսիֆիկացիա
Զբոսաշրջիկների վարքագծի փոփոխությունների կանխատեսում
Հայաստանի համար կարևոր են կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, բայց առավել կարևոր և արդիական է կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվելու կարողությունների զարգացումը և համապատասխան ներուժի ստեղծումը:

Կլիմայի փոփոխության հարմարվողականության կարևորությունը հիմնավորվում է նրանով, որ այն հնարավորություն է տալիս

- պահպանել բնակիչների բարեկեցությունն ու գոյատևման միջոցները,
 - բարձրացնել քաղաքացիական պաշտպանության մակարդակը,
 - պահպանել մարդկանց առողջությունը,
 - խնայել բնական պաշարները,
 - ապահովել տնտեսական կայունություն,
 - համայնքում ապահովել համերաշխության մթնոլորտ,
 - պահպանել բնական էկոհամակարգերը և կենսաբազմազանությունը
- Մեզ համար էապես կարևորվում է տնտեսության, հատկապես՝ դրա ագրարային հատվածի խոցելիության ուսումնասիրությունն ու գնահատումը: Կլիմայի փոփոխության խոցելիությունը սահմանվում է որպես տեսակի, համակարգի կամ ռեսուրսի զգայունություն կլիմայի

փոփոխության և այլ սթրեսային գործոնների բացասական հետևանքների նկատմամբ: Հետևաբար, ազդեցությունն այն փոփոխության քանակն ու արագությունն է, որը տեսակը կամ համակարգը կրում է կլիմայի փոփոխության ուղղակի (օրինակ, ջերմաստիճանի, տեղումների փոփոխություններ) կամ անուղղակի (օրինակ, աճելավայրի տեղաշարժերը՝ բուսածածկույթի փոփոխության պատճառով) ազդեցությունից: Ինչ վերաբերվում է զգայունությանն, ապա այն վերաբերում է տեսակների կամ համակարգի բնութագրերին, որոնք կախված են շրջակա միջավայրի հատուկ պայմաններից, և այն աստիճանին, որով այն կազդի կլիմայի փոփոխության վրա: Մյուս կողմից, հարմարվողական կարողությունը տեսակների կարողությունն է՝ դիմանալ և պահպանվել փոփոխվող պայմաններում (օրինակ, վարքագծային փոփոխություններ) և/կամ էվոլյուցիայի միջոցով:

Այսպիսով, կլիմայի փոփոխության ռիսկերը կրճատելու և դրանք կառավարելու համար անհրաժեշտ է նվազագույնի հասցնել վտանգի ենթակայության և խոցելիության աստիճանը, միաժամանակ զարգացնելով դիմակայելու ներուժն ու կարողությունները:

Համակարգված գործողությունների արդյունքում, հարմարվողականության կարողությունների զարգացումն ու ներուժի ավելացումը կարելի է իրականացնել ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային, ազգային, համայնքային կամ նույնիսկ առանձին տնային տնտեսությունների մակարդակում: Դա, իր հերթին, կարևոր է դիտարկել առաջին անհրաժեշտության ապրանքների, հատկապես սննդամթերքի մասով ինքնաբավության տեսանկյունից: Նշված ապրանքների ցանկում ցորենն առաջինն է, որի ինքնաբավության մակարդակը Հայաստանում նվազել է՝ 2017 թվականի 33,2%-ից 2019-ին հասնելով 30,7%-ի: 2014 թվականին այս ցուցանիշը 48,7% է եղել: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ստացված պաշտոնական տվյալների Հայաստանում ցորենի ցանքատարածքները 2016 թվականի 101.000 հեկտարից 2019-ին նվազել են մինչև 60.000 հա: 2016-ին, երբ երկրում ավելի շատ ցորեն էր մշակվում, ներկրվել է հավելյալ 325.000 տոննա: Ընդ որում, ցորենի մշակությանը հատկացվող տարածքների նվազմանը զուգահեռ նվազել է նաև ներկրումը՝ 2019-ին կազմելով 250.000 տոննա: Խոջոյանը նշում է, որ երբ ցորենի մշակությանը հատկացվող տարածքները նվազեցին, ակնկալվում էր, որ ներմուծման ծավալները կավելանան՝ բացը լրացնելու համար: Սակայն, տեղի է ունեցել ճիշտ հակառակը: Այս անհամապատասխանության հիմքում, ըստ նրա, կարող է լինել այն, որ 2016 թվականին ցորենի ցանքատարածքների մասին տեղեկատվությունն իրականում չափազանցված է եղել: Մինչև 2020 թվականի Արցախյան պատերազմը, Արցախում ցորենի

ցանքատարածքները կազմում էին 35.000 հեկտար, հատիկաընդեղենի մշակության համար օգտագործվող տարածքները՝ 75.000-ից 80.000 հեկտար: Ըստ մոտավոր հաշվարկների՝ Հայաստանում և Արցախում տարեկան սպառվել է մոտավորապես 500.000-ից 600.000 տոննա ցորեն, որի 20-30%-ն ապահովել է Արցախը: Արցախում աճեցվել է տարեկան մինչև 150.000 տոննա հատիկաընդեղեն և ցորեն: 2019 թվականին, օրինակ, այդ ցուցանիշը կազմել է 118.000 տոննա: Արցախի գյուղատնտեսության նախարարության տվյալներով՝ Արցախյան երկրորդ պատերազմից հետո հայկական կողմի վերահսկողությունից դուրս է մնացել 95.000 հեկտար վարելահող: Դեռևս հստակ չէ, թե դրա որ մասն են կազմել ցորենի և հատիկաընդեղենի ցանքատարածքները: Նշենք, որ ցորեն և հատիկաընդեղեն մշակվում էին հիմնականում Քաշաթաղում, Հադրութի, Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջաններում, որոնց մեծ մասն այժմ Ադրբեջանի վերահսկողության տակ է: 2020-ի բերքահավաքի ավարտից հետո Հայաստան ցորեն է ներկրվել: Ցորենի ցանքատարածքների կորուստը, ամենայն հավանականությամբ, կարտացոլվի նաև 2021 թվականի ցուցանիշներում, երբ դրանք հրապարակվեն 2022-ին: Ըստ էկոնոմիկայի նախարարության՝ ցորենի ներմուծման ծավալների ավելացումը ցանքատարածքների կորուստի հետևանքները մեղմացնելու կարճաժամկետ լուծում է միայն: 2019 թվականին Հայաստան ներմուծված ցորենի ավելի քան 90%-ը ներկրվել է Ռուսաստանից, մնացած 10%-ը՝ Ուկրաինայից և Վրաստանից: Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տարածքում, անդամ պետությունների պահանջարկը բավարարելուց հետո, 2020 թվականին արձանագրվել է ավելի քան 46 միլիոն տոննա ցորենի ավելցուկ: Կարելի է ակնկալել, որ ԵԱՏՄ-ից ցորենի ներմուծման տեսակարար կշիռը 2021 թվականին կավելանա: Բացի այդ, էկոնոմիկայի նախարարությունը մշակել է հատիկաընդեղենի, ցորենի և այլ մշակաբույսերի արտադրության խթանման նոր ծրագիր, որը մեկնարկելու այս գարնանը: Ակնկալվում է, որ ծրագիրը կառավարության հաստատմանը կներկայացվի փետրվարի սկզբին: Ինչ վերաբերվում է ավելի թարմ՝ 2023թ. տվյալներին, ապա չնայած այն հանգամանքին, որ աշխարհի ապրանքային շուկաներում ցորենի գները հասել են վերջին տասը տարվա ընթացքում ամենաբարձր մակարդակին /Չիկագոյի հացահատիկային սակարանը մեկ բուշել ցորենի դիմաց տալիս էին 5,24 դոլար/ Հայաստանում առատ բերքի և այլ տնտեսական գործոնների ազդեցության ներքո տեղի է ունեցել ցորենի գնի որոշակի անկում⁹:

⁹ <https://armenpress.am/arm/news/489974.html>

Չնայած կլիմայի գլոբալ փոփոխության մեջ Հայաստանի ներդրումը անհամեմատ փոքր է, 1990-ականների համեմատ հանրապետությունում միջին ջերմաստիճանը բարձրացել է 1,3°C-ով, տեղումների քանակը նվազել 9%-ով: Լինելով չորային կլիմա ունեցող լեռնային երկիր՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում Հայաստանը չորորդն է՝ մինչև 21-րդ դարի վերջը բնական աղետների թվի հավանական աճի ցուցանիշով: Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Կլիմայի փոփոխության մասին երրորդ ազգային հաղորդագրության՝ ջերմաստիճանի բարձրացումն ու տեղումների քանակի նվազումը բացասաբար կանդրադառնա մարդկանց առողջության վրա, կարագացնի անապատացումը և կքայքայի ջրային պաշարները: Զրի պակասուրդի պատճառով կնվազի գյուղատնտեսական արտադրանքի ծավալը: Կհաճախանան բնական աղետները՝ երաշտ, վարարումներ, անտառային հրդեհներ՝ տևական հետք թողնելով էկոհամակարգի և կենսաբազմազանության վրա:

Չնայած Հայաստանի ՀՆԱ կառուցվածքում գյուղատնտեսության, անտառային տնտեսության ու ձկնորսության տեսակարար կշռի հետևողական նվազմանը (2012 թվականի 18,4%-ից մինչև 12%՝ 2019 թվականին), այն շարունակում է ամենից ծանրակշիռը մնալ համախառն արդյունքում: Հաշվի առնելով, որ առաջին անհրաժեշտության ապրանքների ցանկում առաջին հինգ ապրանքատեսակները Հայաստանում գյուղատնտեսական նշանակության են, պետք է ակնկալել, որ կլիմայի փոփոխությունը կազդի երկրի պարենային անվտանգության բոլոր բաղադրիչների վրա՝ ներառյալ պարենի արտադրությունը¹⁰:

Հետևաբար, որքան շուտ լինի արձագանքը՝ կլիմայի փոփոխության հետևանքներին, այնքան ավելի կառավարելի կլինեն պարենային անվտանգությանը սպառնացող ռիսկերը: Նախարարության մշակած գյուղատնտեսական ծրագրերի մի մասը նպատակաուղղված է հենց կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանը և հարմարվողականության միջոցով խոցելիության նվազեցմանը: Հայաստանի վերականգնվող ջրային պաշարները մոտավոր հաշվարկներով կազմում են տարեկան մոտ 7,5 միլիարդ խորանարդ մետր, որից 3 միլիարդ ստորգետնյա ջրերն են: Այս ցուցանիշը չի ներառում Սևանա լճի ջրային ռեսուրսները, որը բնական ջրամբար է, և Արաքս գետը, որը համատեղ է օգտագործվում Թուրքիայի, Իրանի և Ադրբեջանի հետ: Վերջին տարիներին Հայաստանում ջրային ռեսուրսները նվազել են միջինում 5%-ով՝ հիմնականում կլիմայի փոփոխության ու մարդու գործունեության հետևանքով: Որոշ

¹⁰ <https://evnreport.com/arm/magazine-issues/armenias-food-security/>

փոփոխության հիմնական գործոններից է: Գյուղատնտեսությունն արտանետում է ամբողջ աշխարհում արտանետվող ջերմոցային գազերի քառորդ մասը: Եվ գյուղատնտեսությունն այն ոլորտն է, որն ամենախոցելի է կլիմայի փոփոխության տեսանկյունից», - ասաց նա և հավելեց, որ ջերմաստիճանի բարձրացման հետ միասին բույսերի հիվանդությունները և վնասատուներն ավելի արագ են զարգանում և տարածվում տարածաշրջաններով, ընտրում նոր երկներ: Այս առումով, հաշվի առնելով ռելիեֆը, աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմաններն ու ռոտզման հնարավորությունները, Հայաստանը դասվում է երկրագործության տեսանկյունից ծայրահեղ ռիսկային երկրների շարքին: Կլիմայի փոփոխությունը Հայաստանում հանգեցրել է կենսաբազմազանության կորստի, էկոհամակարգերի դեգրադացման ու ջրի սակավության: Պարենային անվտանգությունն առանց զարգացած ռոտզելի գյուղատնտեսության չի կարելի պատկերացնել: Հայաստանում արդեն այդ խնդրի առաջ ենք կանգնած: Ֆերմերները նշում են, որ վերջին տարիներին կտրուկ նվազել է աղբյուրներից ջրի հոսքը և ռոտզման ջրի հասանելիությունը: Իսկ ջրի սակավությունը բերում է գյուղատնտեսության արտադրության նվազման, նվազեցնում է ֆերմերների տնտեսական արդյունավետությունը, որն իր հերթին պարենային անվտանգության խնդիր է առաջացնում: 1960-ականների համեմատությամբ մոտ 20%-ով ավելացել են գյուղատնտեսությանը մեծ վնաս հասցնող հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների՝ երաշտների, խորշակների, կարկտահարության ու վաղ գարնանային ցրտահարությունների հաճախականությունն ու ինտենսիվությունը կլիմայի փոփոխության համատեքստում: Որոշ տարիներին մեր մշակովի հողատարածքների մոտ 123 հազար հեկտարը վնասվել է, ինչն ամբողջ հանրապետության տարածքի շուրջ 30%-ն է կազմում¹²: Հայաստանում մինչև 2100թ. կանխատեսվում է, որ ագրոկլիմայական գոտիների տեղաշարժը կլինի 200-400մ, կնվազի մշակաբույսերի բերքատվությունը, կուժեղանա հողերի դեգրադացիան ու կնվազի բերրիությունը, և կմեծանա հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բացասական ազդեցությունը: Աշխարհի տարբեր տարածաշրջաններում աղետների հաճախականությունը 1979-2019թթ. աճել է նաև ամբողջ աշխարհում: «Աղետների կրկնվելու հաճախականությունն ամբողջ աշխարհում 2010թ-ին 1970 և 1980թթ-ի համեմատությամբ ավելացել է ավելի քան երեք անգամ: Նույնչափ բացասական ազդեցություն է ունենում այն նաև գյուղատնտեսության վրա: Աղետների պատճառով տնտեսական կորուստները 2010-ականներին կազմել են տարեկան միջինը 170 միլիարդ

¹² <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13159/>

ԱՄՆ դոլար: Հաշվարկները ցույց են տալիս, որ դրա մոտ 25-26%-ը բաժին է հասնում գյուղատնտեսությանը:

Հաշվի առնելով աշխարհի բնակչության աճի տեմպերը, 2050թ.

բնակչության թիվը կկազմի 9,3 միլիարդ մարդ, և բնակչությանը կերակրելու հարց կառաջանա: «FAO-ի գնահատականների համաձայն՝ այս տեսանկյունից պարենամթերքի արտադրությունը պետք է ավելացվի մոտ 60%-ով: Հակառակ դեպքում, կլիմայի փոփոխությամբ աղետների հաճախականությամբ պայմանավորված, աշխարհը կարող է լուրջ խնդիրների առջև կանգնել:

Վերոնշյալ բոլոր խնդիրների վերհանման և գնահատման նպատակով մենք հաշվի ենք առել FAO-ի իրականացրած Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի աղետների ռիսկի նվազեցման համակարգի համապարփակ վերլուծության արդյունքները: Հարկ է նկատել, որ այդ վերլուծության հիման վրա FAO-ն պատրաստել է առաջարկությունների փաթեթ, որով առաջարկվում է նախևառաջ գյուղատնտեսության ոլորտի համար մշակել և ներդնել աղետների ռիսկերի կառավարման ռազմավարություն: Հայաստանում գյուղատնտեսությանը վերաբերող աղետների հետ կապված այդպիսի համապարփակ փաստաթուղթ գոյություն չունի, և նման ռազմավարությունն անհրաժեշտ է աղետների ազդեցությունը ճիշտ գնահատելու և աղետների ռիսկերի նվազեցման և մեղմման համար քաղաքականություն մշակելու համար: Այդ փաստաթղթով առաջարկվել է նաև ոլորտում աղետների ռիսկերի կանխատեսման, կանխարգելման, նախապատրաստման և արձագանքման համար բազմավտանգ և բազմակողմանի համակարգային ռիսկերի կառավարման մոտեցում իրականացնել: Իսկ ոլորտային փաստաթղթերում պարտադիր ներառել ոչ միայն բնական վտանգները, այլև՝ մարդածին ու կենսաբանական սպառնալիքները: Այսպես օրինակ, COVID-19 համավարակն ամբողջ աշխարհում պարենային անվտանգության և պարենամթերքի իրացման ու մատակարարման խնդիրներ է առաջացրել:

FAO-ն մի մեթոդաբանություն է մշակել, որը հաստատվել էր դեռևս 2015թ. ՀՀ գյուղատնտեսության նախարարի կողմից: Հիմա ծրագրային ապահովումն է մշակվում: Եվ այդ ծրագրային ապահովումը ոչ միայն Հայաստանի համար է: FAO-ն մշակում է մեթոդաբանություն Հայաստանում իրականացված մեր փորձի հիման վրա, որպեսզի բոլոր համայնքներում նույն մեթոդաբանությամբ այդ վնասներն ու կորուստները հաշվարկեն: Այն հասանելի կլինի համապատասխան

նախարարություններին ու կառավարությանը¹³: Եվ դրա հիման վրա հնարավոր կլինի քաղաքականություն մշակել:

Անդրադառնալով արժարժվող խնդիրների տեսանկյունից վերջին շրջանում տեղ գտած առավել կարևոր քայլերին և որոշումներին, հարկ է նկատել, որ ԵԱՏՄ գործադիր մարմնի վերջին նիստի ժամանակ որոշվել է ՀՀ-ից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներ հացահատիկի արտահանման արգելքը ևս 6 ամսով երկարաձգել: Ըստ հիմնավորման՝ առաջարկվում է արգելել ցորենի, մեսլինի, գարիի, եգիպտացորենի, հնդկացորենի, արևածաղկի սերմի, արևածաղկի ձեթի արտահանումը: Փորձագետների վկայությամբ, հիշյալ որոշումն ուղղված է Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության և տնտեսության կայունացման ապահովմանը: Նշված ապրանքների մասով ներքին արտադրությունը չի բավարարում ՀՀ շուկայի պահանջարկը, ինչն ապահովվում է հիմնականում ներմուծման ծավալների հաշվին: Որոշմամբ սահմանվող արգելքը չի տարածվելու Հայաստանի Հանրապետություն ներմուծված և «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների վրա», - նշվում էր «Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» չզեկուցվող հարցի նախագծում: Այս ամենը վտանգում է մեր երկրի պարենային անվտանգությունը՝ մանավանդ բնակչության առաջնային սպառման պարենամթերքի մասով: Իրականում, մենք այսօր ունենք այդ պարենամթերքների առումով՝ ինքնաբավության շատ ցածր ցուցանիշներ, և դժվար է պատկերացնել, թե ինչ կլինի, եթե Հայաստանը դարձյալ հայտնվի պատերազմական կամ Արցախի վերջին ժամանակաշրջանի շրջափակման և սովամահության վիճակում, կամ, եթե նորից բռնկվի համաճարակ, և հարևան երկրները, կարանտինի պատճառով, փակեն սահմանները ու թույլ չտան դրսի երկրներից պարենամթերք ներմուծել Հայաստան¹⁴: Ինչ վերաբերվում է նշվածը հաստատող պաշտոնական թվերին, ապա ըստ 2021թ. Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշռի (2022թ. ազգային պարենային հաշվեկշիռը ՀՀ ՎԱԿ-ը դեռ չի հրապարակել)՝ առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության աստիճանը մեր երկրում հետևյալն է՝ ցորեն՝ 23,2 տոկոս, կարտոֆիլ՝ 111,7 տոկոս, բանջար-բոստանային մշակաբույսեր՝ 105,6 տոկոս, միրգ-հատապտուղ (բացի խաղողից)՝ 114,4

¹³ Նույն տեղում

¹⁴ <https://168.am/2023/11/13/1957118.html?fbclid=IwAR2jCe8k78-D4AETopnWFvDmn9TPfVX75I1X8FvxrgNZErFvHqDimPQvA6I>

տոկոս, հատիկաընդեղենային մշակաբույսեր՝ 37,7 տոկոս, բուսական յուղ՝ 0,6 տոկոս, շաքար՝ 33,9 տոկոս, ձու՝ 98,8 տոկոս, կաթ՝ 87,7 տոկոս, տավարի միս՝ 92,2 տոկոս, խոզի միս՝ 53,2 տոկոս, ոչխարի և այծի միս՝ 100,4 տոկոս, թռչնի միս՝ 26,7 տոկոս, ձուկ՝ 143,7 տոկոս, խաղող՝ 106,7 տոկոս:

Մտահոգիչ են ցորենի, հատիկաընդեղենային մշակաբույսերի, բուսական յուղի, շաքարի, թռչնի մսի ցածր ցուցանիշները: 2021թ.՝ 2020թ. համեմատ, ինքնաբավության աստիճանը նվազել է՝ ցորեն՝ 1,2 տոկոս, հատիկաընդեղենային մշակաբույսեր՝ 0 տոկոս, բուսական յուղ՝ 0,3 տոկոս, շաքար՝ 4,1 տոկոս, ձու՝ 1,5 տոկոս, ոչխարի և այծի միս՝ 0 տոկոս, ձուկ՝ 4,7 տոկոս, խաղող՝ 1,3 տոկոս:

Պարենային անվտանգության տեսակետից, ամենահիմնական պարենամթերքը եղել և մնում է հացահատիկը: Ըստ ՄԱԿ-ի Պարենի Գյուղատնտեսական կազմակերպության տվյալների՝ 2022 թվականին ցորենի արտադրության համաշխարհային հսկաներն են Չինաստանը՝ 138 մլն տ (18 տոկոս), ԵՄ-ն՝ ընդհանուր 134,3 մլն տ (17 տոկոս), Հնդկաստանը՝ 103 մլն տ (13 տոկոս), Ռուսաստանը՝ 91 մլն տ (12 տոկոս), ԱՄՆ-ը՝ 44,9 մլն տ (6 տոկոս):

Հացահատիկի համաշխարհային գները 2022թ. դեկտեմբերի 7-ի տվյալներով հետևյալն են՝ Արգենտինա՝ 397 ԱՄՆ դոլար/տ, ԱՄՆ 385 ԱՄՆ դոլար/տ, Կանադա՝ 371 ԱՄՆ դոլար/տ, Ավստրալիա՝ 367 ԱՄՆ դոլար/տ, ԵՄ՝ 332 ԱՄՆ դոլար/տ, Ռուսաստան՝ 316 ԱՄՆ դոլար/տ: Ուկրաինա-Ռուսաստան պատերազմի հետևանքով Ուկրաինայում հացահատիկի բերքը նախորդ տարիներին կազմել է 33 մլն տ, իսկ 2022-2023թ.՝ 20 մլն տ, և դրանից կարողացել են արտահանել 42 տոկոսը (մինչև 11 մլն տ),- մանրամասնեց ՄԱԿ-ի փորձագետը և հավելեց,- Որպեսզի մեր երկրում պարենային անվտանգության վիճակը բարելավվի, առաջին հերթին անհրաժեշտ է, որ երկրում չլինեն չմշակված վարելահողեր, մինչդեռ այսօր Հայաստանի վարելահողերի կեսից ավելին (222 հազար հա-ից ավելի) չի մշակվում, դեգրադացվել և շարքից դուրս է եկել:

Պարենային ապահովության համար մասնագետները հորդորում են անհրաժեշտ նախապայման համարել նաև գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների, մեքենասարքավորումների, նյութատեխնիկական միջոցների, ճիշտ ագրոտեխնիկայի համալրումը, ինչպես նաև՝ պետության և միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային ծախսումը: Բացի այդ, երկրի պարենային անվտանգության վիճակի կարգավորման համար ոմանք գտնում են, որ պետք է վերականգնել

գյուղատնտեսության նախարարությունը և այն համալրել ոլորտի գրագետ, խելացի և փորձառու մասնագետներով¹⁵:

Պետության ագրարային քաղաքականությունը դրանց արդյունավետությունը կլիմայի փոփոխությանը հարմարվելու տեսանկյունից և օրենսդրության համապատասխանությունը տեղական և միջազգային մարտահրավերներին

Հայաստանի Հանրապետությունը, որպես զարգացող երկիր, ներառված է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) Հավելված 1-ում և չունի ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու պարտավորություններ: Միևնույն ժամանակ, վերահաստատելով կլիմայի փոփոխության դեմ պայքարի իր գլոբալ ջանքերը, Հայաստանը վավերացրեց Փարիզի համաձայնագիրը, Կիոտոյի արձանագրության Դոհայի փոփոխությունը և ներկայացրեց իր «Ազգային նպատակներով նախատեսված գործողությունները/ներդրումները» (ՀՀ Կառավարության թիվ 41 արձանագրային որոշում 2012 թ. 10.09.2015):

ԿՓՇԿ ուժի մեջ մտնելուց ի վեր Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարբերաբար հաստատում է արձանագրային որոշումներ «Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին»:

«Ազգային մակարդակով սահմանված (նախատեսվող) ներդրումներ» (INDC) փաստաթուղթը որոշում է երկրի ուղին մինչև 2050 թվականը, բնութագրում է Հայաստանի Հանրապետության ներդրումը Փարիզյան համաձայնագրի իրականացման գործում: Վերը նշված համատեքստում, Հայաստանը շարունակում է իր գործունեությունն՝ ուղղված կլիմայի փոփոխության խնդիրների ընդգրկմանը ազգային և ոլորտային զարգացման քաղաքականությունում: Մասնավորապես, առանձնահատուկ դեր է հատկացվում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի միջոցառումներին, որոնք միաժամանակ մեծ նշանակություն ունեն նաև տնտեսական և սոցիալական նպատակների ապահովման հարցում: Հայաստանն արդեն իսկ զգալի քայլեր է ձեռնարկել այս ուղղությամբ:

¹⁵ Նույն տեղում

Հայաստանի էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարությունը հիմնված է վերականգնվող էներգետիկայի տնտեսապես հիմնավորված ներուժի իրացման, էներգաարդյունավետության բարձրացման, ատոմային էներգետիկայի զարգացման, տարածաշրջանային համագործակցության ու ինտեգրացման և էներգառեսուրսների ներկրման ուղիների դիվերսիֆիկացիայի վրա: Այդ ռազմավարությունն ամրագրված է 2013-2017 թթ. ՀՀ-ում ընդունված ռազմավարական փաստաթղթերով, զարգացման հայեցակարգերով, ՀՀ օրենքների լրացումներով և փոփոխություններով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով և ներդրումային ծրագրերով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մասնակցել է «Ընտրված մշակաբույսերի վրա ազդող կլիմայական ռիսկերն ու սցենարները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով աշխատաժողովին, որը կազմակերպվել է Գերմանական խնայողական բանկերի միջազգային համագործակցության հիմնադրամի (DSIK), ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՄԿ) և Լայբնիցի անվան անցումային տնտեսությունների գյուղատնտեսական զարգացման ինստիտուտի (IAMO) համատեղ ջանքերով: Նշված կառույցները ներկայումս համագործակցում են Հայաստանում ընտրված մշակաբույսերի վրա հարատև կլիմայական ռիսկերի պատմական և կանխատեսվող ազդեցությունների մոդելավորման աշխատանքներում: Համատեղ իրականացվող ծրագրի նպատակն է հասկանալ Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության վրա՝ նպաստելով երկրում տնտեսական կայունության և պարենային անվտանգության ապահովմանը: Այս նախագծի շրջանակում ուսումնասիրվել են Հայաստանի համար տնտեսապես կարևոր 12 թիրախային մշակաբույսեր (ցորեն, գարի, եգիպտացորեն, վարունգ, լոլիկ, կարտոֆիլ, խնձոր, սերկևիլ, տանձ, ծիրան, դեղձ և բայ)¹⁶:

Ծրագրի շրջանակում ուսումնասիրվել է նաև կլիմայի փոփոխության և եղանակային ծայրահեղ իրադարձությունների պատմական ազդեցությունը այս մշակաբույսերի բերքատվության վրա, և այն, թե ինչպես կարող է հետագայում փոխվել դրանց բերքատվության ցուցանիշը շարունակվող կլիմայական փոփոխության պայմաններում: Կատարված աշխատանքը պետք է հիմք հանդիսանա ռիսկերի կառավարման գործիքի ստեղծման համար, ինչը կօգնի Հայաստանի ֆերմերներին զարգացնել կլիմայի փոփոխության հարմարվողականության ներուժը: Աշխատաժողովի ընթացքում ՀՄԿ-ի մասնագետները ներկայացրել են

¹⁶ <https://mineconomy.am/news/2516>

շնորհանդես «Հայաստանում ագրոօդերևութաբանական ծառայությունները և գյուղատնտեսության հետ կապված կլիմայական ռիսկերի գնահատումը» թեմայով: Միջոցառմանը մասնակցել են նաև Շրջակա միջավայրի նախարարությունը, DSIK հայաստանյան գրասենյակը, ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, պետական մարմինների, գյուղատնտեսական հետազոտական և ֆինանսական հաստատությունների, միջազգային զարգացման գործակալությունների, գյուղատնտեսական ՀԿ-ների և կոոպերատիվների ներակայացուցիչներ:

1992 թ. ՄԱԿ-ի հատուկ միջազգային համաժողովին երկրները համաձայնություն ձեռք բերեցին կլիմայի հարցերով համագործակցության անհրաժեշտության մասին: Երկրների այդ համաձայնությունները համախմբվեցին մեկ միասնական միջազգային փաստաթղթում, որը կոչվում է *Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա*: Հայաստանը կոնվենցիան վավերացրել է 1993 թվականի մայիսին:

2015 թ. դեկտեմբերին ընդունվեց Փարիզյան համաձայնագիրը: Նոր փաստաթղթի հիմնական նպատակն էր սահմանափակել գլոբալ ջերմաստիճանի աճը՝ նախաարդյունաբերական մակարդակի համեմատ 2°C-ից ոչ ավելի բարձր մակարդակում և, միաժամանակ, ձգտել 1.5°C սահմանագծին՝ կլիմայի փոփոխության առավել աղետալի հետևանքներից խուսափելու նպատակով¹⁷:

Ինտենսիվ այգեգործությունը խթանելու ուղղությամբ կառավարությունը որոշակի ներդրումներ է կատարել, ինչն այս ոլորտը դարձնում է ավելի կայուն, օգնում պահպանել ջրային ռեսուրսներն ու բարձրացնել բերքատվությունը: Հարմարվողականության բարձրացման կարելի է հասնել նաև առկա տեսակները կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայուն և բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանքով համալրելով: Կաթիլային ոռոգումը կամ հակակարկտային համակարգերը ոլորտում հարմարվողականության մեկ այլ հնարավորություն են: Կառավարությունը նաև գյուղատնտեսության ապահովագրություն է առաջարկում, որը կարկտի, երաշտի և ընդհանրապես կլիմայի փոփոխության հետևանքների և ռիսկերի մեղմացմանն ուղղված գործիքն է: Գործադիրն ավելացրել է ապահովագրության ենթակա մշակաբույսերի թիվը, ընդլայնել ծրագրի մարզային ծածկույթը: Նախարարությունը համագործակցում է նաև Շրջակա միջավայրի նախարարության հետ՝ կլիմայի փոփոխության հնարավոր հետևանքները ճշգրիտ գնահատելու և

¹⁷ <https://theanalyticon.com/hunis-2022/%d5%af%d5%ac%d5%ab%d5%b4%d5%a1%d5%b5%d5%ab-%d6%83%d5%b8%d6%83%d5%b8%d5%ad%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a8-%d6%87-%d5%a4%d6%80%d5%a1-%d5%a1%d5%a6%d5%a4%d5%a5%d6%81%d5%b8%d6%82%d5%a9/>

պոտենցիալ ներդրողներին փաստահենք կանխատեսումներով ուղղորդելու նպատակով: Էկոնոմիկայի նախարարության այս ծրագրերի նպատակը գյուղատնտեսներին ոչ միայն օգնելն է, այլև ուսուցանելը՝ հաշվարկների վրա հիմնված տնտեսություն վարելու, մշակաբույսերի բերքատվությունը բարձրացնելու և գյուղատնտեսական համապատասխան սարքավորումների օգնությամբ կորուստները նվազեցնելու համար: 2020 թվականին, 2019-ի համեմատ, ավելացել են գյուղատնտեսական և ագրովերամշակման սարքավորումների ձեռքբերման պետաջակցության ծրագրերը, լիզինգը: Վերջինս ևս մեկ ցուցանիշ է, որ չնայած դժվարություններին՝ գյուղատնտեսության ոլորտում ներդրումները շարունակվել են 2020 թվականի ողջ ընթացքում: 2019 թվականին կառավարությունն ընդունեց **Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգը՝** հստակեցնելով հանրապետությունում ջրային ռեսուրսների պահպանման ու արդյունավետ օգտագործման հիմնական սկզբունքները: Հայեցակարգը նշում է այս առումով խնդրահարույց ոլորտները՝ գյուղատնտեսություն, հիդրոէլեկտրակայաններ, ձկնաբուծարաններ, և կարևորում ջրի արդյունավետ սպառում ապահովող ռազմավարությունների ընդունումը: Գյուղատնտեսության ոլորտում այդպիսի լուծման օրինակ կարող է լինել մակերեսային ոռոգման (ինչը Հայաստանի գյուղացիական տնտեսությունների շրջանում մեծ տարածում ունեցող պրակտիկա է) փոխարինումը կաթիլայինով: Չնայած մակերեսային հոսքով ոռոգումը համեմատաբար հեշտ է և պակաս ծախսատար, ջրի հոսքն ու մակերեսային գոլորշիացումը ժամանակի ընթացքում հանգեցնում է ջրի զգալի կորուստների: Կորստի ուժգնությունը հատկապես էական է, երբ արտահոսքը չի վերահսկվում և կրկնակի չի օգտագործվում: **«**

գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունն անդրադառնում է ոլորտի արդյունավետ զարգացման վերը նշված խնդիրներին և որոշ լուծումներ առաջարկում: Խնդիրների շարքում են արտադրողականության և արդյունավետության ցածր մակարդակը, տեխնիկական պատշաճ հագեցվածությունը, կլիմայական ռիսկերն ու թերզարգացած ենթակառուցվածքները: Թեև այս մարտահրավերները միայն Հայաստանին չեն բնորոշ, դրանք ոչ մի դեպքում չպետք է անտեսվեն, եթե երկիրը ցանկանում է ապահովել իր քաղաքացիների պարենային անվտանգությունը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության 2020 թ. ռազմավարության մեջ նշվում է, որ Հայաստանը պետք է ջանքեր գործադրի ագրոպարենային համակարգ ձևավորելու և հիմնական սննդատեսակների ինքնաբավության մակարդակը բարձրացնելու

ուղղությամբ՝ հողօգտագործման արդյունավետությունը ավելացնելու, գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն աջակցելու և տեղական արտադրությանն օժանդակելու միջոցով: Այժմյան 1,8 տոննայի փոխարեն Հայաստանում մեկ հեկտարից կարելի է ստանալ առնվազն 3-4 տոննա հացահատիկ (մեկ հեկտարի հաշվով իդեալական բերքատվությունը մոտ 8 տոննա է), և որպես 2020 թվականի նվաճում նշում բարձրորակ հացահատիկի սերմերի սուբսիդավորման ծրագիրը, որի շրջանակում Հայաստան է ներկրվել ավելի քան 5.000 տոննա նոր տեսակի սերմեր: Չնայած բոլոր դժվարություններին՝ համավարակ, պատերազմ, գործընթացն ամբողջությամբ ավարտվել է:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղություններն ամփոփող 2020-ից 2030 թթ-ի ռազմավարությունը հիմնական յոթ սկզբունքների վրա է հիմնված, որոնցից մեկը հենց կլիմայի փոփոխության հարմարվողականություն, դիմադրողականություն և շրջակա միջավայրի կայունությունն է: Այս փաստաթղթի հիմնադրույթների համաձայն, պետք է իրականացնել կլիմայի փոփոխության վերաբերյալ իրազեկման, ռեսուրսների կայուն օգտագործման գործառույթներ՝ ապահովելով գյուղատնտեսության ոլորտի զարգացումը, կիրառելով ջրային և հողային ռեսուրսների կառավարման լավագույն փորձը: Ուստի սա կարող է կառավարության որդեգրած ռազմավարության իրականացումը դարձնել կենսական անհրաժեշտություն: Մյուս կողմից, կլիմայի փոփոխություններով պայմանավորված պարենային անվտանգության ապահովման խնդիրը բնավ առանձին երկրների կամ միայն գիտական հանրության ուսումնասիրության հարց չէ: Այն վաղուց վերածվել է համաշխարհային բնույթի սպառնալիքի: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը զգուշացրել է պարենային ճգնաժամի վտանգի և սովի ներկայիս համաշխարհային մարտահրավերների մասին¹⁸:

Պարենային անվտանգության ապահովման խնդիրները ԵՄ - ՀՀ CEPA համաձայնագրի համատեքստում

ՀՀ-Եվրամիություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության Համաձայնագիրը (CEPA) ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 1-ին: Համաձայնագրով սահմանված են նաև աշխատանքային ու սոցիալական իրավունքներին, հավասար հնարավորություններին վերաբերող

¹⁸ Secretary-General Warns of Unprecedented Global Hunger Crisis, with 276 Million Facing Food Insecurity, Calling for Export Recovery, Debt Relief, 24. 06. 2022, <https://press.un.org/en/2022/sgsm21350.doc.htm#:~:text=Secretary%2DGeneral%20Warns%20of%20Unprecedented,Recovery%2C%20Debt%20Relief%20%7C%20UN%20Press>

դրույթներ: Դրանց վերաբերում է հիմնականում Համաձայնագրի 4-րդ, 15-րդ, 51-րդ, 52-րդ, 54-րդ, 140-րդ, 279-րդ հոդվածները:
 ՀՈԴՎԱԾ 140, էջ 108, ՀՈԴՎԱԾ 279, էջ 265, 52-53-55
 ՀԸԳՀ-ի 140 և 279-րդ հոդվածներում շեշտելով պարենային անվտանգության ապահովման կարևորությունը, կողմերը նաև հատուկ անդրադարձ են կատարում կլիմայի փոփոխության հարմարվողականության խնդիրներին: Մասնավորապես, նշվում է «Կողմերը պետք է մշակեն և ամրապնդեն իրենց համագործակցությունը՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործընթացում: Համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով Կողմերի՝ հավասարության և փոխադարձօգուտի վրա հիմնված շահերը, ինչպես նաև այդ ոլորտում երկկողմ և բազմակողմ հանձնառությունների միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունը»¹⁹: Իսկ հոդված 52-ում նշվում է, որ «Համագործակցությունը պետք է խթանի ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակով ձեռնարկվող միջոցառումները՝ կապված՝

1. կլիմայի փոփոխության մեղմացման,
2. կլիմայի փոփոխությանը հարմարեցման,
3. կլիմայի փոփոխության հարցերին անդրադառնալու շուկայական և ոչ շուկայական մեխանիզմի,
4. նոր, անվտանգ, կայուն և հարմարեցված նորարարական ցածր ածխածնային տեխնոլոգիաների ուսումնասիրության, մշակման, ցուցադրման, տեղաբաշխման, փոխանցման ու տարածման,
5. դեպի ընդհանուր և ոլորտային քաղաքականություններ կլիմայի հարցերով դիտարկումների ուղղորդման, և
6. իրազեկության բարձրացման, կրթության և վերապատրաստման հետ: Վերջապես, հոդված 54-ում կարևորվում է. «Համագործակցությունը պետք է ընդգրկի, *inter alia*, հետևյալ նպատակները՝
 1. Փարիզյան համաձայնագրի իրականացման միջոցառումները՝ սույն Համաձայնագրով սահմանված սկզբունքներին համապատասխան,
 2. կլիմայի փոփոխությանն առնչվող արդյունավետ գործողություններ ձեռնարկելու նպատակով կարողությունների շրջանակի ընդլայնմանն ուղղված միջոցառումները,
 3. կլիմայի փոփոխության երկարաժամկետ մեղմացման և դրան հարմարեցման համար կլիմային առնչվող ընդհանուր ռազմավարության և գործողությունների պլանի մշակումը,

¹⁹ՀՀ – ԵՄ ՀԸԳՀ Գլուխ 4, ԿԼԻՄԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՈԴՎԱԾ 51, էջ 52-54:

4. խոցելիության և հարմարեցման գնահատումների մշակումը,
5. ցածր ածխածնային զարգացման պլանի մշակումը,
6. կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված երկարաժամկետ միջոցառումների մշակումն ու իրականացումը՝ ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների հարցին անդրադառնալու միջոցով,
7. ածխածնի արտանետումների քվոտաների վաճառքի միջոցառումները,
8. տեխնոլոգիաների փոխանցման գործընթացի խթանմանն ուղղված միջոցառումները,
9. կլիմայի հարցերով դիտարկումները դեպի ոլորտային քաղաքականություններ ուղղորդելուն միտված միջոցառումները, և
10. օգոնային շերտը քայքայող նյութերին և ֆտոր պարունակող գազերին առնչվող միջոցառումները:

Պարենային անվտանգության ապահովումը պահանջում է իրատեսական և հստակ ձևակերպված ռազմավարության իրականացում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարենային անվտանգությունն ինչպես տնտեսական անվտանգության, այնպես էլ ազգային անվտանգության կենսական տարրերից մեկն է: Հայեցակարգային տեսանկյունից պարենային անվտանգությունը իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ուղղված է անհրաժեշտ որակի և բավարար քանակությամբ, առողջության համար անվտանգ, լիարժեք պարենով ապահովմանը, որը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ բնակչության առավել խոցելի հատվածների համար, և կարող է սպառվել նրանց կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ: Երկրի պարենային անվտանգությունը հիմնականում ապահովվում է գյուղատնտեսության, սննդամթերքի արտադրության և սննդի ներմուծման համակարգերի զարգացման միջոցով²⁰:

Պարենային անվտանգությունը կարևորվում է ինչպես միջազգային մակարդակներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Պարենային անվտանգության համակարգի ապահովման նպատակով ընդունվել են բազմաթիվ իրավական ակտեր, որոնցից կարելի է առանձնացնել.

- Մարդու Իրավունքների Հռչակագիրը,
- ՄԱԿ-ի Հազարամյակի Զարգացման նպատակները,
- «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության 2013-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»

²⁰ <https://www.mineconomy.am/page/1333>

- «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»,
- «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը»,
- «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման ռազմավարությունը»,
- «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը»,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N48 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության հայեցակարգից բխող միջոցառումների 2017-2021 թվականների ծրագիրը» և այլն:

Ոլորտի կարգավորման մյուս կարևոր իրավական փաստաթուղթը *Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության հայեցակարգը և միջոցառումների ցանկն է*²¹, ուր, ի թիվս այլ կանխատեսումների, 18-րդ կետով ներկայացված է մշակաբույսերի բերքատվության փոփոխության գնահատումը՝ ցորեն, կարտոֆիլ, խաղող 2030-2070: Սույն հայեցակարգի 2-րդ գլխում ներառված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսության ոլորտում ներգրավված կառույցների, գյուղացիական տնտեսությունների և համապատասխան մասնագետների կարողությունների հզորացում՝ հիմնվելով տեղական և միջազգային լավագույն փորձի վրա, ապահովագրական նոր պրոդուկտների մշակում և ներդրում կլիմայական վտանգների, ռիսկերի և աղետների նկատմամբ գյուղատնտեսական արտադրության դիմակայության բարձրացման նպատակով, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության, սերմարտադրության և տնկարանային արտադրության ոլորտներին հասցեական աջակցության մեխանիզմների մշակման և ներդրման միջոցով, կլիմայի փոփոխության պայմաններում հողային և ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետ և խնայողական տեխնոլոգիաների ներկայացում և ներդրում, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով մշակության արդյունավետ տեխնոլոգիաների կիրառում,

²¹ <https://www.e-draft.am/projects/4888/about>

օրգանական գյուղատնտեսության մեջ ներգրավված հողատարածքների ավելացում,

աջակցություն հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բացասական ազդեցությունը մեղմող միջոցառումների ներդրմանը գյուղատնտեսական արտադրությունում,

անասնակերի որակի բարելավման և արտադրության ծավալների ավելացմանն ուղղված տեխնոլոգիական նորարարությունների ներկայացում և ներդրում գյուղացիական տնտեսություններում, գյուղատնտեսության ոլորտում ձևավորված ավանդական գենդերային խոչընդոտների հաղթահարման առումով, կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը մեղմող որոշումների կայացման գործում կանանց մասնակցության ընդլայնում,

գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարող կանանց ներգրավվածության խթանում կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրներով զբաղվող պետական մարմիններում և հասարակական կազմակերպություններում:

Միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրներ կարող են հանդիսանալ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

Հայեցակարգի իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության ազդեցության վերաբերյալ գիտելիքի և հմտությունների հզորացում, գյուղատնտեսական արտադրության դիմակայության բարձրացում կլիմայի փոփոխության, օդերևութաբանական վտանգավոր երևույթներից և ռիսկերից,

կլիմայի փոփոխության և օդերևութաբանական վտանգավոր երևույթների և ռիսկերի նկատմամբ գյուղատնտեսությանը և տնտեսավարողներին հասցվող վնասների մեղմում:

Վերջապես, մեր ուսումնասիրության համար կարևոր իրավական փաստաթուղթ է *Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշումը*²²: Ներկայումս փաստաթղթով նախատեսված բազմաթիվ միջոցառումներ պետք է արդեն իրականացված լինեն²³: Ընդամենը 6 միջոցառում է մնացել մինչև 2025թ. , հատկապես կարևոր է, թե ինչպես է ընթացքը՝

²² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152612>

²³ <https://www.infoeco.ru/index.php?id=8764>

1.10. Ութ մարզերի համար կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ /
ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արարատի մարզպետարան
ՀՀ Արմավիրի մարզպետարան
ՀՀ Լոռու մարզպետարան
ՀՀ Կոտայքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Սյունիքի մարզպետարան
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Եզրահանգումներ և խնդրի կարգավորմանը միտված առաջարկություններ

Այսպիսով, մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները և ձևավորել խորհրդատվական կարծիք՝ աջակցելու ՀՀ Կառավարությանն ավելի արդյունավետ դարձնելու պարենային անվտանգության ապահովման գործընթացը կլիմայի փոփոխության հարմարվողականության համատեքստում, հատկապես ԵՄ – ՀՀ ՀԸԳՀ-ի պահանջներին և հիմնադրույթներին համապատասխան:

1. Վերջին տարիներին ՀՀ կառավարությունն այս ուղղությամբ որոշակի քայլեր է իրականացնում, մասնավորապես, կարկտապաշտպան ցանցերի, կաթիլային ոռոգման, ինտենսիվ այգիների ու ջերմատնային տնտեսությունների ներդրմամբ: Աստիճանաբար ներդրվում է նաև գյուղատնտեսության ոլորտի ապահովագրական համակարգը:

2. Ձեռքբերումների հետ միասին նկատվում են որոշակի բացթողումներ: Մասնավորապես, փորձագիտական հարցումները վկայում են, որ կառավարության կողմից դեռևս որևէ անդրադարձ չի կատարվել այնպիսի կարևոր խնդիրների, ինչպիսիք են կլիմայի փոփոխության երկարաժամկետ մեղմացման և դրան հարմարեցման համար կլիմային առնչվող ընդհանուր ռազմավարության և գործողությունների պլանի մշակումը, խոցելիության և հարմարեցման գնահատումների մշակումը, ցածր ածխածնային զարգացման պլանի մշակումը, կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված երկարաժամկետ միջոցառումների մշակումն ու իրականացումը՝ ջերմոցային գազերի

արտանետումների քվոտաների հարցին անդրադառնալու միջոցով, ածխածնի արտանետումների քվոտաների վաճառքի միջոցառումները, տեխնոլոգիաների փոխանցման գործընթացի խթանմանն ուղղված միջոցառումները,

կլիմայի հարցերով դիտարկումները դեպի ոլորտային քաղաքականություններ ուղղորդելուն միտված միջոցառումները, և օգոնային շերտը քայքայող նյութերին և ֆտոր պարունակող գազերին առնչվող միջոցառումները:

3. Քանի որ այսօր կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունն արդեն տեսանելի է, որը հատկապես իր արտահայտումն է ունենում գյուղատնտեսության ոլորտում, անհրաժեշտ է, որպեսզի և՛ ֆերմերները, և՛ քաղաքականություն մշակողները հստակեցնեն, թե ինչն է առաջնահերթ՝ կլիմայի փոփոխությունների հարմարվողականության առումով, որպեսզի փորձագիտական խորհրդատվությունը և բույսերի ընտրությունը նույնպես լինի համապատասխան:

4. Դիտարկելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է և ունի ռազմավարական նշանակություն երկրի ՀՆԱ-ի համար՝ կլիմայի փոփոխության մարտահրավերներից գյուղատնտեսական աշխատանքներում ռիսկերի ապահովագրությունն ու դրանց նկատմամբ ոլորտում կլիմայի փոփոխության և նոր քաղաքականությանը հարմարվողականության միջոցառումների իրականացումը կարելի է դասել ազգային ռազմավարական առաջնահերթությունների շարքին: Հատկապես կարևորվում են ՀԱԾ ծրագրի և դրա շրջանակներում իրականացվող ուսումնասիրություններում մատնանշվող ուղենիշները կլիմայի փոփոխության մարտահրավերներին դիմակայելու և հարմարվելու գործընթացում:

5. Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության և պարենային անվտանգության ռազմավարական խնդիր է Հայաստանի Հանրապետության համար: Մասնավորապես, կարևոր է որդեգրել աղետների ռիսկերի նվազման կամ մեղմացման կառավարման և համակարգման ստանդարտ ընթացակարգեր, որոնք կիրառելի կլինեն նաև գյուղատնտեսության ոլորտում: Կարևոր է մշակել և ներդնել գյուղատնտեսության ոլորտում աղետների ռիսկերի նվազեցման ու մեղմացման և կլիմայի փոփոխությունների հարմարողականության ուղղությամբ գյուղատնտեսության լավագույն փորձը՝ այդ թվում խելացի կլիմայական գյուղատնտեսության գործելակերպ:

6. Կարևոր է ստեղծել աղետների ռիսկերի նվազեցման և մեղմացման և կլիմայի փոփոխությունների հարմարվողականության մոդելների և

տեղական և միջազգային ուսանելի փորձի շտեմարան: Այսինքն՝ փաստաթղթավորվի, ներկայացվի, որ անհրաժեշտության դեպքում կիրառվի: Միաժամանակ, փորձագետների համոզմամբ, կարևոր է ներդնել աղետների ռիսկերի վաղ նախազգուշացման համակարգեր՝ այդ թվում կենսաբանական աղետների համար:

7. Ներկայումս Հայաստանում ձևավորված վաղ նախազգուշացման համակարգեր գոյություն չունեն: Ժամանակն է օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները, այդ թվում՝ արբանյակային, որպեսզի հիդրոօդերևութաբանական կայանները հնարավորություն ստանան զգուշացնել ֆերմերներին հիվանդությունների ու վնասատուների տարածման մասին: Կարևոր է նաև ներդնել գյուղատնտեսության ոլորտում աղետների հետևանքով առաջացած վնասների և կորուստների գնահատման համակարգ:

8. Կարևոր է նկատել, որ մինչ օրս շատ աննշան, իսկ որոշ դեպքերում ընդհանրապես որևէ շոշափելի առաջընթաց չի գրանցվել հատկապես բարձրացնելու հանրության իրազեկությունը, ինչպես նաև կազմակերպելու կրթական և վերապատրաստման համապատասխան ծրագրեր՝ կլիմայի փոփոխության հարցերին անդրադառնալու շուկայական և ոչ շուկայական մեխանիզմի, նոր, անվտանգ, կայուն և հարմարեցված նորարարական ցածր ածխածնային տեխնոլոգիաների ուսումնասիրության, մշակման, ցուցադրման, տեղաբաշխման, փոխանցման ու տարածման, դեպի ընդհանուր և ոլորտային քաղաքականություններ կլիմայի հարցերով դիտարկումների ուղղորդման վերաբերյալ:

9. Անհրաժեշտ ենք համարում նաև ուշադրություն դարձնել ոլորտին առնչվող օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտությանը:

Մասնավորապես, «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքն²⁴, ընդունվել է 2002թ., այսինքն՝ 21 տարի առաջ և կարիք ունի լրամշակման՝ հաշվի առնելով վերջին տարիներին կլիմայի փոփոխության, տարածաշրջանային զարգացումների, համավարակի, համայնքների միավորման ու խոշորացման գործընթացների և այլ մարտահրավերների ազդեցությունը պարենային անվտանգության ապահովման գործընթացի վրա:

10. Կարևորում ենք նաև վերը նշված օրենքը համապատասխանացնել ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, որն ընդունվել է 2015թ.

²⁴ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1312&lang=arm>

11. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կայքում պարենային անվտանգության ապահովման համար առանձնացված փաստաթղթերի ցանկում²⁵ առաջարկվում է ընդգրկել նաև՝
 ԵՄ- ՀՀ ՀԸԳՀ, Հավելված N 1 ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1083-Լ որոշման ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԸ
 ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ 2021-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ, «Հայաստանի Հանրապետության 2013-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»
<https://www.gov.am/files/docs/1322.pdf>, Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան, որը Հայաստանը կոնվենցիան վավերացրել է 1993 թվականի մայիսին, ինչպես նաև 2015 թ. դեկտեմբերին ընդունված Փարիզյան համաձայնագիրը:

12. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1083-Լ որոշման Հավելված N 1-ը՝ Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը հաշվի չի առել ՀԸԳՀ որևէ դրույթ, իսկ Հոդված 58-ում 4 հիմնասյուների (պարենի առկայություն, մատչելիություն, օգտագործում և կայունություն) մեջ չի ներառել պարենի որակը, որը մեր համոզմամբ, կարևորագույն գործոն է:

13. Ոլորտի կարգավորման մյուս կարևոր իրավական փաստաթղթում՝ Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության հայեցակարգը և միջոցառումների ցանկում²⁶, ի թիվս այլ կանխատեսումների, ուր 18-րդ կետով ներկայացված է մշակաբույսերի բերքատվության փոփոխության գնահատումը ցորեն, կարտոֆիլ, խաղող 2030-2070թթ. համար, կարևորում ենք հավելել նաև անասնապահության ոլորտի գնահատականը: Միաժամանակ, նույն փաստաթղթի ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ բաժնում նշվում է գյուղատնտեսության ոլորտում ձևավորված ավանդական գենդերային խոչընդոտների, որոշումների կայացման գործում կանանց մասնակցության ընդլայնման, ոլորտում տնտեսավարող կանանց ներգրավվածության խթանման մասին: Դրա հետ մեկտեղ առաջարկվում է համապատասխան դրույթներով ամրագրել երիտասարդների մասնակցության և դրանց առնչվող խնդիրները: Նույն փաստաթղթում՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ բաժնում նշվում է, որ միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրներ կարող են հանդիսանալ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից

²⁵ <https://www.mineconomy.am/page/1333>

²⁶ <https://www.e-draft.am/projects/4888/about>

տրամադրվող ֆինանսական միջոցները, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները (միջազգային դոնոր կազմակերպություններ) 80 մլ դրամ: Մեր համոզմամբ, այստեղ պետք է հավելել նաև թեկուզ մասնակի ֆինանսավորման այնպիսի կարևոր աղբյուր, ինչպիսին պետական բյուջեն է:

14. Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշմամբ²⁷ նախատեսված բազմաթիվ միջոցառումներ պետք է արդեն իրականացված լինեն: Ընդամենը 6 միջոցառում է մնացել մինչև 2025թ.: Հետևաբար, կարևոր պարզել, թե ինչպես է դրանց իրականացման ընթացքը հատկապես ԳԼՈՒԽ 9. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ (2021-2025թթ.), ուր 1.10.-ում նշվում է ութ մարզերի համար կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի մշակման մասին: Առաջարկում ենք իրականացնել ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ մշտադիտարկում՝ այդ գործընթացում ներգրավելով փորձագիտական հանրությանը:

15. Կարևոր է իրականացնել պարենամթերքի մատչելիության մակարդակի բարձրացման քաղաքականություն և այդ նպատակով ՀՀ վարչապետին կից ստեղծել ՀՀ պարենային անվտանգության ծրագրերի և միջոցառումների ժամանակացույցի կատարման մշտադիտարկման հանձնաժողով և եռամսյակային պարբերականությամբ քննարկել ոլորտի հրատապ հարցերը:

²⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152612>

Ոլորտի փորձագետների, գործատուների, հասարակական կազմակերպությունների շրջանում իրականացված հարցումների արդյունքները

(ի մի են բերված առավել ընդհանրական բնույթ կրող պատասխանները)

- Որքանով է կարևոր և առաջնահերթ պարենային անվտանգության ապահովումը ՀՀ-ում:

Ռազմական և էներգետիկ անվտանգությունից հետո երրորդը պարենային անվտանգությունն է

ՀՀ-ն իր ունեցած բնական ռեսուրսներով չի կարող բնակչությանը ապահովել պարենով, ուստի ՀՀ կառավարության հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի պարենային անվտանգության ապահովումը:

Վերջին ընդունված ռազմավարությունը բավարար է, բայց եթե կատարվի Պարենային անվտանգությունն ազգային անվտանգության բաղկացուցիչն է, որը ՀՀ-ում ձեռք է բերում առանձնակի կարևորություն: Պարենային անվտանգության ապահովումը պահանջում է համակողմանի, ընդգրկուն ու մասնակցողական մոտեցումներ հատկապես մի շարք բնագավառների՝ առողջապահության, գյուղատնտեսության, արդյունաբերության, վիճակագրության, ֆինանսական, սոցիալական ապահովության, արտակարգ իրավիճակների, արտաքին հարաբերությունների և այլն: Ինչպես նախկինում, այնպես էլ աշխարհաքաղաքական զարգացումների ներկայիս պայմաններում պարենային անվտանգության վիճակը բնութագրվում է խիստ վտանգված, քանի որ սեփական արտադրությամբ պարենամթերքի ապահովվածության մակարդակը կազմում է մինչև 55 տոկոս: Եվ պատահական չէ, որ խնդիր է դրված «Գլոբալ պարենային անվտանգության ինդեքսի» փաստացի ցուցանիշը հասցնել 2024թ.՝ 65.3% և 2030թ.՝ 75.0 տոկոս: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ արտակարգ իրավիճակներում կենսական կարևոր սննդամթերքի արտադրության անհնարության դեպքում պարենային ճգնաժամերից խուսափելու համար պետք է ձգտել ապահովել երկրի մասշտաբով պարենային անկախության, այսինքն տեղական արտադրության անհրաժեշտ մակարդակ: Հատկապես 2021-2022թթ. գյուղատնտեսական արտադրանքի ինքնաբավության մակարդակը տատանվել է ցորենինը՝ 23-24.%, հատիկաընդեղենինը՝ 37,3%, խոզի մսինը՝ 47-53%, թռչնի մսինը՝ 22-26%, բուսական յուղինը՝ 0.6%, շաքարինը՝ 33% սահմաններում:

Հարցադրումից ելնելով՝ կարող ենք հստակորեն ընդգծել, որ պարենային զամբյուղում ներառված հիմնական պարենամթերքով

ապահովվածությունն անվտանգ չէ, քանի որ մեծ է կախվածությունը ներկրումներից, ինչը պայմանավորված է հանրապետությունում հատկապես ագրարային ռեսուրսային ներուժի ոչ արդյունավետ օգտագործմամբ և կառավարմամբ:

Պարենային անվտանգության առումով ՀՀ-ն կարելի է դասակարգել որպես «խոցելի», քանի որ բնակչության կեսից ավելին պարենային անապահովության վտանգի տակ է, ինքնաբավության մակարդակը չի անցնում 55 տոկոսը: Ինչպես փաստում են ուսումնասիրությունները ՀՀ-ում հետազոտված տնային տնտեսությունների 23%-ը պարենային անապահովության վիճակում է, իսկ 56%-ը պարենային ապահովության սահմանային շեմին են: Ագրոպարենային ապրանքների ներկրումները գերազանցում են արտահանումները ավելի քան 2,5 անգամ, ուր առանձնանում է ցորենի ներկրումները, որն արժեքային արտահայտությամբ տարեկան կտրվածքով կազմում են շուրջ 365,0 հազ. տոննա կամ 102,5 մլն ԱՄՆ դոլար: Երկրում առկա է պարենային անվտանգության առումով խոցելիության բազմաթիվ գործոններ: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կենսապես կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության առկա մակարդակը, սննդամթերքների սպառման էներգետիկ կառուցվածքը, ըստ առանձին սննդամթերքներ ձևավորված ինքնաբավության փաստացի մակարդակը, ինչպես նաև հանրապետության աշխարհագրական դիրքը, աշխարհաքաղաքական վիճակը, դեպի ծով ելք չունենալը, հաղորդակցության ուղիների խոցելիությունը, պարենային պաշարների ձևավորման հույժ կարևորությունը անհրաժեշտ է համարվում, որ գյուղատնտեսության զարգացումը առաջնահերթ դիտարկվի որպես պարենային անվտանգության ապահովման ոլորտ, այսինքն գյուղատնտեսության զարգացման ուղղությունները, առաջնահերթությունները և մեխանիզմները պետք է բխեն պարենային անվտանգության ապահովման առաջնահերթությունից:

այն առաջնահերթ և ամենակարևոր հարցերից է Ժամանակակից աշխարհաքաղաքական և տարածաշրջանային մարտահրավերիների համատեքստում խիստ կարևոր է, հաշվի առնելով Հայաստանի դիրքը հարավային Կովկասում և տարածաշրջանում գլոբալ խաղացողների դիրքերի վերադասավորման հնարավոր սցենարները:

Պարենային անվտանգությունը ՀՀ-ի համար առաջին առաջնահերթություններից է՝ անվտանգային գործոնի հետ հավասարազոր:

Ժամանակակից աշխարհաքաղաքական և տարածաշրջանային մարտահրավերիների համատեքստում խիստ կարևոր է, հաշվի առնելով

Հայաստանի դիրքը հարավային Կովկասում և տարածաշրջանում գլոբալ խաղացողների դիրքերի վերադասավորման հնարավոր սցենարները:

- Ինչպե՞ս եք գնահատում պարենային անվտանգության ներկայիս ռազմավարությունը և դրա իրականացումը:

ՀՀ կառավարության կողմից ներկայումս վարած քաղաքականության իրավիճակից ելնելով՝ գնահատում եմ այն ոչ բավարար:

Հայաստանի Հանրապետությունում ընթացիկ տարում ընդունվել է «Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը» և 2023-2026թթ. Գործողությունների ծրագիրը (2023թ.), որը ծրագրային դրույթներով ու միջոցառումներով ընդգրկված համապարփակ փաստաթուղթ է և այն պետք չէ դիտարկել նախկինում ընդունված նման օրինակ փաստաթղթերից տարանջատ:

ՀՀ տարածաշրջանային առանձնահատկությունները ուղղորդում են մշակել և իրականացնել «Պարենային անվտանգության քաղաքականության» ռազմավարական մոտեցումներ:

Իհարկե «ՀՀ պարենային անվտանգության ռազմավարությունը» պետք է պարունակի նաև որոշակի առանձնահատկություններ, որոնք բխում են ագրոպարենային համակարգի ճյուղերի համահունչ և ինովացիոն զարգացման տեսլականից՝ հիմքում դնելով հողի, ջրի, ֆինանսական և մարդկային ռեսուրսների օպտիմալ օգտագործման հրամայականը:

«Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը», որն ընդունվել է 2023թ., իր դրական կողմերով հանդերձ հաշվի չի առնում հատկապես արտակարգ իրավիճակներում պարենային ապահովության շուրջ իրականացվող քայլերի հաջորդականությունը, որը պետք է արտացոլում ստանար միջոցառումների տեսքով ծրագրում:

- գնահատում եմ անբավարար: Չգիտենք որ սննդամթերքը որ երկրից է գալիս, չի բացառվում ոչ բարեկամ, նույնիսկ թշնամական երկրներից:

Չենք տեսնում ով և ինչպես է ստուգում, ինչ խնդիրներ են լինում, հանրությանը տեղեկատվական մշտական հարթակ չի տրամադրված Ռազմավարությունը լուրջ վերանայման կարիք ունի, հաշվի առնելով տարածաշրջանային վերջին իրադարձությունները Ռազմավարության իրականացումը պետք իրագործվի պետություն-մասնավոր հատված փոխհաշվետու համագործակցությամբ:-

Պարենային անվտանգության ռազմավարությունը գնահատում եմ միջին մակարդակի: Հիմնական խնդիրը կորդինացիայի պակասն է պետական կառույցների միջև: Իրականացման ընթացքին ծանոթ չեմ:

Ռազմավարությունը լուրջ վերանայման կարիք ունի, հաշվի առնելով տարածաշրջանային վերջին իրադարձությունները Ռազմավարության

իրականացումը պետք իրագործվի պետություն-մասնավոր հատված փոխհաշվետու համագործակցությամբ:

- Ի՞նչ խնդիրներ եք տեսնում պարենային անվտանգության բնագավառում, որ պետք է արտացոլվի օրենքում և համանուն ռազմավարության մեջ:

Պարենային անվտանգության բնագավառում օրենսդրությամբ և ռազմավարությամբ պետք է արգելվի ոչ ճիշտ տվյալներով վիճակագրության հրապարակումները, պետք է պայքար տարվի ուռճացված տվյալներով հաշվետվությունների ներկայացման դեմ: Անհրաժեշտ է կոնկրետացվի պարենի պահուստների քանակները, որը կբավարարի առնվազն 6 ամիս լիակատար շրջափակման դեպքում Վերլուծությունները ու ուսումնասիրությունները վկայում են նախկին փաստաթղթերով նախանշված պարենային անվտանգության քաղաքականության ուղղությունների ու միջոցառումների իրագործման ցուցիչների ոչ գիտական հիմնավորվածության բացակայության մասին: Իրականում վստահություն չեն ներշնչում «Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության» կյանքի կոչման մոտեցումների իրատեսականությունը, սպասվելիք ինչպես՝ երկարաժամկետ արդյունքները, այնպես էլ՝ կայուն վերջնարդյունքները: Նման հետևության պատճառները բազմաբնույթ են և կարելի է ուղղակի ընդգծել այն հանգամանքը, որ մինչ այժմ հանրապետությունում չունենք պարենային անվտանգության իրավիճակի կանխատեսման և ռիսկերի կանխագելման համակարգ: Ըստ էության << կառավարման մարմինները և կառույցները ճգնաժամային իրավիճակին արձագանքում են ուշացումով և, որպես կանոն, գործում են ոչ համակարգված: Ծրագրային միջոցառումները ընդհանրական են, հասցեականությունը բավականին անորոշ: Ըստ մեզ, այն պետք է մանրամասնեցվի և դետալացվի ըստ տարածաշրջանների ու իրականացնող սուբյեկտների, թույլ է իրականացվում մոնիտորինգը և հաշվետվողականությունը: Լուրջ վերակառուցման կարիք է զգացվում պարենային անվտանգության ապահովման կառավարման մոտեցումներում:

Գոհացուցիչ չէ << կառավարության, պետական կառավարման լիազոր մարմինների, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների ֆունկցիոնալ ներգրավվածությունը պարենային անվտանգության ապահովման ծրագրային գործընթացներին: Որպես կանոն տեսանելի չեն ոչ պետական կազմակերպությունների (<Կ-ներ) և մասնավոր հատվածի և ընդհանրապես ագրոբիզնեսի համակարգի օղակների պատասխանատվության չափաբաժինը այս կարևոր գործին:

-լինի էլեկտրոնային բաց հարթակ, որպեսզի և քաղաքացիները, և պետական ու հասարակական կազմակերպությունները ունենան մշտաքննարկումներ

Պարենային անվտանգության ապահովման իրավական հիմքերի հստակ սահմանում, իրականացման հստակ մեխանիզմների մշակում և դրանց արդյունավետ կիրառում:

Գյուղատնտեսական հողերի թերի օգտագործումը

Գյուղատնտեսության ոլորտում ցածր արտադրողականություն

Գյուղացիական տնտեսությունների միջև համագործակցության պակասը

Պարենային անվտանգության ապահովման իրավական հիմքերի հստակ սահմանում, իրականացման հստակ մեխանիզմների մշակում և դրանց արդյունավետ կիրառում:

- Ի՞նչպես է կլիմայի փոփոխությունն ազդում պարենային անվտանգության ապահովման գործընթացի վրա:

Հաշվի առնելով ՀՀ աշխարհագրական դիրքը՝ կարծում եմ, որ կլիմայի փոփոխությունները, տարեկան սակավ տեղումները կարող են ազդել պարենային անվտանգության գործընթացի վրա:

Միջնաժամկետում էական չէ

Բնականաբար կլիմայի գլոբալ փոփոխություններն ունեն և կունենան ազդեցություն Հայաստանի պարենային անվտանգության ապահովման վրա, հատկապես հացահատիկային մշակաբույսերի արտադրությունում:

Ուստի չորադիմացկուն սորտերի ապրոբացումը դառնում է առաջնային խնդիր, ինչպես նաև տարաբնույթ միջոցառումների մշակումը և իրականացումը:

-բացասաբար և ոչ միայն Հայաստանում: Երաշտի վտանգը մեծացել է, մեծացել են բնական անոմալիաները-կարկուտը, գարնանը տեղացող ձյունը,

Աշխարհի գլոբալ տաքացումն անմիջական ազդեցությունի ունի պարենային անվտանգության ապահովման համար, հաշվի առնելով գյուղատնտեսության առջև կանգնած լուրջ մարտահրավերները, մասնավորապես ջրային ռեսուրսների նվազումը, ոլորտում տարաբնույթ նոր տեսակի համաճարակների և հիվանդությունների առաջացման ռիսկերը:

Կլիմայի փոփոխությունը հարուցում է բազմաթիվ խնդիրներ, միաժամանակ ստեղծելով հնարավորություններ Հայաստանի որոշ շրջանների համար՝ դրանք դարձնելով ավելի օգտական գյուղատնտեսությամբ զբաղվելու և նոր մշակաբույսեր աճեցնելու տեսանկյունից:

Աշխարհի գլոբալ տաքացումն անմիջական ազդեցությունի ունի պարենային անվտանգության ապահովման համար, հաշվի առնելով գյուղատնտեսության առջև կանգնած լուրջ մարտահրավերները, մասնավորապես ջրային ռեսուրսների նվազումը, ոլորտում տարաբնույթ նոր տեսակի համաճարակների և հիվանդությունների առաջացման ռիսկերը:

- Որոնք են դրա հետ կապված դժվարությունները, պատճառները. գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության և մրցունակության մակարդակը, ինչպես նաև հիմնական բաղադրիչների իրավիճակը:

Կառավարությունը ոչ պատշաճ մոտեցում է ցուցաբերում գյուղատնտեսության ոլորտում, ինչի արդյունքում առաջանում են դժվարություններ:

- Գյուղատնտեսությունում անհրաժեշտ է իրականացվի տնտեսությունների միավորում և խոշորացում, ինչը կբարձրացնի արդյունավետությունը Հարցի դրվածքը առանձին ուսումնասիրման առարկա է :

գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության և մրցունակության մակարդակը, ինչպես նաև հիմնական բաղադրիչների իրավիճակը-եթե պետությունը մտածում է առողջապահությունը զարգացնել այնպես, որ բուժօգնությունը հասնի հիվանդի տուն, ապա այստեղ պետք է մտածի այնպես, որ պետության օգնությունը հասնի գյուղացու ֆերման, տունը, աշխատավայրը

Գյուղատնտեսությունը առանց պետական երկարաժամկետ աջակցության չի կարող արդյունավետ պայքարել նման աղետների դեմ: Ինքնարժեքի աճ

Լրացուցիչ տեխնիկայի կարիք

Ջրի պակաս

Գյուղատնտեսությունը առանց պետական երկարաժամկետ աջակցության չի կարող արդյունավետ պայքարել նման աղետների դեմ:

- Ինչպե՞ս կգնահատեք կլիմայի փոփոխության հարմավորողականության տեսանկյունից իրականացվող պետական միջոցառումների արդյունավետությունը:

Բավարարից ցածր

Անհրաժեշտ է ավելացնել ջրային ռեսուրսների կուտակման հնարավորությունները

Արդյունքային տեսակետից իրականացվող միջոցառումներն առանձնապես նկատելի չեն: Կլիմայի փոփոխականության հարմարվողականության շուրջ պետական միջոցառումներն ու

արդյունավետությունը փաստացի գնահատված չէ, ուստի պահանջվում է մշտական մոնիթորինգի իրականացում:

Գաղափար շատ չունենք, կարծում եմ անբավարար է: Ետ ենք մնում ոռոգման համակարգեր, կանաչ տնտեսություն, փոքր, մատչելի, ՀՀ ռելիեֆին հարմարեցված տեխնիկա ունենալու հարցերում, անբավարար է տեղական պարարտանյութերի արտադրությունը: Ջուրը գյուղացիներին տրվում է ժամերով, հաջորդաբար ոռոգելու ռեժիմով: Սակայն լավ կլիներ, եթե ստեղծվեին ոչ մեծ բաժանարար բաքեր, որտեղից ջուրը փոքր խողովակներով, հավասարաչափ բաժանվելով, տարվեր յուրաքանչյուր ֆերմերի կամ գյուղացու կամ ամառանոց ունեցողի տարածք, այնտեղ կուտակվեր իր անձնական բաքում և ջրվեր իրեն հարմար ժամին, իրեն հասած չափաբաժին ջրով: Այս դեպքում ավելի հեշտ կլինի դնել նաև ջրաչափեր ամեն անհատի համար, և նա վճարի կոնկրետ ստացած իր չափաբաժին ջրի համար:

Յաճր:

Միջին:

Յաճր:

- **Ի՞նչ կառաջարկեք ՀՀ պարենային անվտանգության ապահովման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության հարմավորականության մարտահրավերը և իրականացվող պետական միջոցառումները:**

Կառավարությունն իր առջև պետք է առաջնային խնդիր դնի ՀՀ-ում գյուղատնտեսական բոլոր ճյուղերի խոր ուսումնասիրման և եղած հարցերի լուծման համար:

«Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունում» կատարել լրացում՝ ավելացնելով առանձին գլուխ «Պարենային անվտանգությունը և կլիմայի փոփոխությունները», ներկայացնելով քաղաքականության ուղղությունները, իսկ միջոցառումների ցանկում՝ հստակ նշելով ֆինանսավորման ծավալները և իրականացվելիք միջոցառումներն ըստ տարիների և ոլորտների՝ խնդիր դնելով լուծել հիմնական արտադրանքների արժեզրեթանների արդյունավետության բարձրացման հարցերը: Մշակել և իրականացնել ծրագրեր գյուղատնտեսական արտադրանքի ներկրումները տեղական արտադրությամբ փոխարինման:

Պետական վերահսկողական մարմիններից ինձ հայտնի է սննդի անվտանգության տեսչությունը, որը հիմնականում խանութներն ու սննդի օբյեկտներն է ստուգում: Կարծում եմ մաքսատներում պետք է ստեղծել առանձին սննդի անվտանգությունը հսկող մարմին

Մշակել մասնագիտական համակողմանի և լուրջ ուսումնասիրությունների և կանխատեսումներրի հիման վրա:

համալիր իրատեսական միջոցառումների փաթեթ, այն ներառել կառավարության գերակա ռազմավարությունների և դրանց իրականացման ծրագրերում մեջ:

Սերտ համագործակցություն պետական բոլոր կառույցների միջև:

Համայքային համագործակցություն

Գյուղացիական տնտեսությունների արդիականացում

Գյուղատնտեսական տեխնիկայի առկայություն

Մշակել մասնագիտական համակողմանի և լուրջ ուսումնասիրությունների և կանխատեսումներրի հիման վրա:

համալիր իրատեսական միջոցառումների փաթեթ, այն ներառել կառավարության գերակա ռազմավարությունների և դրանց իրականացման ծրագրերում մեջ:

- Ի՞նչ լրացումներ են անհրաժեշտ «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում՝ ելնելով ոլորտի կարգավորման ներկա խնդիրներից:

Կառավարությունը գյուղատնտեսության անասնապահության ճյուղի կառավարումը պետք է որոշակի ժամկետով վերցնի իր վրա (օրինակ՝ 5 տարով) և լուծի առաջացած խնդիրները:

Արմատապես փոփոխության ենթարկել «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքն ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային առումով՝ հիմքում դնելով հետևյալ դրույթները՝

Ապահովել անվտանգ և սննդարար սննդի հասանելիություն բոլորի համար:

Անցում կատարել կայուն սպառման մոտեցումների:

Խթանել բնության և կենսաբազմազանության պահպանության ու պաշտպանության տեսանկյունից անվտանգ մթերքների արտադրությունը:

Ապահովել արդար և արժանապատիվ ապրելակերպ:

Ապահովել խոցելիության, ցնցումների և աղետների նկատմամբ դիմակայունություն:

Արտակարգ իրավիճակներին արձագանքման համակարգի մշակում:

Առանձնակի կարևորել պարենային անվտանգության ապահովման քաղաքականության հիմնական ուղղություններին՝ ընդգծելով կենտրոնական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները:

Օրենքով ամրագրել իմ ներկայացրած, նաև մյուս պատասխանողներից ստացված ռացիոնալ առաջարկները, սահմանել կատարողներ և պատասխանատուներ

Պարենային անվտանգության ապահովման միջոցառումների
չիրականացման կամ անարդյունավետ իրականացման համար ավելի
խիստ արձագանք պետական կառավարման օրգանների նկատմամբ:
Առաջարկները նկարագրված են վերևում

Պարենային անվտանգության ապահովման միջոցառումների
չիրականացման կամ անարդյունավետ իրականացման համար ավելի
խիստ արձագանք պետական կառավարման օրգանների նկատմամբ: